«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի (այսուհետ՝ Ուսումնարան, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 18

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 24

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 35

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 40

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 49

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 55

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 59

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 64

ԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 65

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Ուսումնարանն առաջին նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունն է, որն անցնում է ինստիտուցիոնալ հավատարմագրում: Փորձաքննությունն իրականացնելիս խումբը հաշվի է առել նաև, որ ՄՈՒՀ-ը գտնվում է Շիրակի մարզում և վերջինիս առաքելությունն է՝ ուսումնատեխնիկական միջոցներով զինված բարենպաստ միջավայրում և գործատուների հետ սերտ համագործակցությամբ իրականացնել տնտեսության պահանջներին համապատասխան, կարողությունների զարգացմանը միտված նախնական մասնագիտական հիմնական և լրացուցիչ բարձրորակ կրթական ծառայություններ:

ՄՈՒՀ-ում իրականացվող 7 նախնական մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ) կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա: ՄԿԾ-ները շուկայամետ են, պահանջված են արտաքին շահակիցների կողմից, գրեթե բոլոր կրթական ծրագրերով խմբերն համալրված են: Տարածաշրջանի աշխատաշուկայի համար Ուսումնարանը առնվազն 3 մասնագիտության գծով՝ «Ոսկերչություն», «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», առաջատար է, պատրաստում է պահանջարկ ունեցող կադրեր: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությունը տարածաշրջանում առաջին ներդրված փորձարարական ծրագիրն է, որն իրականացվում է տարածաշրջանի գործընկերոջ՝ «Ֆերտի» կազմակերպության աջակցությամբ: Գործընկերային տեսանկյունից առաջատար կրթական ծրագիր է նաև «Խոհարարական գործ»-ը, որն իրականացվում է դուալ ձևաչափով և, ինչպես պարզ դարձավ, շրջանավարտներն աշխատում են առնվազն Գյումրի քաղաքում գործող գրեթե բոլոր ռեստորանային համալիրներում: Այս կրթական ծրագիրը նույնպես ուսումնական հաստատություն- գործատու- աշխատաշուկա կապի վառ օրինակ է:

Ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող առաջադրանքներին, կիրառվող դասավանդման մեթոդներին, ապա փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողներին տրամադրվում են գործնական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնող առաջադրանքներ, որոնք ապահովում են Որակավորումների ազգային շրջանակով (ՈԱՇ) սահմանված 3-րդ և 4-րդ մակարդակներին համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը:

Ուսումնարանում դասավանդում են բարձր որակավորում ունեցող դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Վարպետների մեծ մասը պրակտիկ ոլորտից են կամ ծավալում են մասնագիտական առաձին գործունեություն: Դասավանդող անձնակազմը նորարար է, փնտրող և հետազոտող, որն անդրադառնում է նաև նրանց կողմից տրամադրվող հանձնարարականների և առաջադրանքների նորարարական լինելուն: Դասախոսական կազմի հետ կապված հիմնական խնդիրը կապված է վերջիններիս կայունության հետ, անձնակազմի միջին տարիքը 45-ից բարձր է, իսկ երբեմն էլ մեկ վարպետը/մասնագետը սպասարկում է մեկ կրթական ծրագիր: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել տարածաշրջանում մասնագետների պակասը, և այն, որ մասնագետների սակավության հետ մեկտեղ ՄՈՒՀ-ը կարողացել է դասախոսական անձնակազմը համալրել այնպիսի մասնագետներով, որոնք արհեստավարժորեն և սրտացավորեն աշխատում են դեռահասության տարիքում գտնվող ուսանողների հետ և արձանագրում են բարձր արդյունքներ:

ՄՈՒՀ-ում գործող բոլոր կրթական ծրագրերն էլ ռեսուրսատար են, վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից վերջիններս պահանջում են հագեցած արհեստանոցներ: Ուսումնարանը ուսանողների համար կարողանում է ապահովել ժամանակակից նյութատեխնիկական բազա, հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը տարեկան կտրվածքով իրականացնում է լաբորատոր ուսումնական նյութերի, մասնագիտական սարքավորումների և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսեր, որոնք տրամադրվում են ուսանողներին գործնական աշխատանքների համար: Այս մոտեցումը նպաստում է սովորողների կարողությունների զարգացմանը: Հարկ է նաև նշել, որ նյութատեխնիկական բազան վերջին տարիներին համալրվել է տարբեր պետական և միջազգային դրամաշնորհների արդյունքում, և ուսանողներին տրամադրվող ռեսուրսները վերջին սերնդի են: Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ հավասարաչափ համալրվել են հիմնականում բոլոր կրթական ծրագրերը (բացառություն է կազմում միայն «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» ՄԿԾ-ն): Արհեստանոցներում յուրաքանչյուր ուսանող ունի իր աշխատանքային տարածքը, գործիքները: Բացի այն, որ ՄՈՒՀ-ն ունի բոլոր անհրաժեշտ ռեսուրսային բազան ուսանողների գործնական աշխատանքները կազմակերպելու համար, նաև որոշ կրթական ծրագրերի շրջանակներում կիրառվում է գործատուների ռեսուրսային բազան՝ ապահովելով իրական աշխատանքային միջավայր ուսանողների համար:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ գործող կրթական ծրագրերը, մանկավարժական կազմը և տրամադրվող ռեսուրսային բազան ապահովում են ուսանողներին տրվող որակավորումների արժանահավատությունը:

ՄՈՒՀ-ը մշակել և գործարկում է կարճաժամկետ (2021-2026թթ.) և երկարաժամկետ պլաններ: Երկարաժամկետ պլանավորման մեջ նախանշված են նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները, դրանցից ակնկալվող արդյունքը, արդյունքի վերահսկողությունը-գնահատումը, իրականացման ժամկետը, ներդրումները-ֆինանսական միջոցները, հնարավոր ռիսկերը և պատասխանատուները: Ընտրված ձևաչափը հնարավորություն է ընձեռում ապահովելու կառավարման արդյունավետությունը, սակայն սահմանված ՌԾ նպատակներն իրենցից առավելապես ենթադրում են միջնաժամկետ գործողություններ, որոնք այդքան էլ հեռանկարային չեն, արդյունքում ՌԾ-ն 2023թ. ավարտին դիտարկվում է գրեթե ավարտված: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը դիտարկելով ողջ կառավարման գործընթացը, կարող է նշել, որ ՄՈՒՀ-ում իրականացվում են գործընթացներ, որոնք երկարաժամկետ են, առաջընթաց ապահովող (օրինակ՝ գործատուների հետ կրթական ծրագիր իրականացնելը, միջազգային դրամաշնորհային ծրագրերի դիմելը), վերջիններս ռազմավարական պլանավորման մաս չեն դարձել: Փորձագիտական խումբը լիահույս է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքները կնպաստեն նոր՝ առավել արդյունավետ երկարաժամկետ պլանավորման իրականացմանը:

Ուսումնարանի ֆինանսական ռեսուրսների կառուցվածքում գերակշռում են ՀՀ պետական բյուջեից, վարձավճարների և դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտները, դրամաշնորհային մուտքերը վերջին տարիներին աճել են, որը նպաստել է ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի բարելավմանը: Ուսումնարանը գիտակցում է նաև բյուջեի դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունը և քայլեր է ձեռնակում միջազգային դրամաշնորհների դիմելու ուղղությամբ:

Ուսումնարանում 2020թ.-ից իրականացվում է ներքին գնահատման գործընթացներ, որոնց վերլուծությունները նպաստում են ՄՈՒՀ-ի բարելավման ուղղությունների մատնանշմանը: Փորձագիտական խումբը նաև կարևորում է այն հանգամանքը, որ ներքին գնահատման արդյունքները հիմք են հանդիսացել արտաքին գնահատման գործընթացներն առավել համակարգային իրականացնելու համար: Որակի ապահովման ներքին համակարգի լիարժեք ներդրման տեսանկյունից դրական է այն, որ ստորաբաժանումներում որոշակիորեն ձևավորված է մշակույթ՝ ՄՈՒՀ-ում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար հավաքագրել և վերլուծել տվյալներ: Անդրադառնալով որակի ապահովման համակարգի ներդրման ՄՈՒՀ-ի ջանքերին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Որակի ապահովման ստորաբաժանումը անհրաժեշտություն ունի լինելու անկախ միավոր, որը հնարավորություն կստեղծի օբյեկտիվ տվյալների հավաքագրման և վերլուծման համար, բացի այդ համակարգը կարող է ծառայել որպես ներքին գնահատման արդյունավետ մեխանիզմ:

Փորձագիտական խումբը լիահույս է, որ ՄՈՒՀ-ում եղած դրական ավանդույթների հիման վրա Որակի ապահովման համակարգը լիարժեքորեն կներդրվի, իսկ գնահատման գործընթացները կկանոնակարգվեն, այդ ամենը կնպաստի նաև ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք կիրառմանը: Ամփոփելով՝ փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացները հիմնականում արդյունքահենք են:

Փորձագիտական խմբի կողմից կարևորվում է նաև ուսումնարանի վարած ակտիվ համագործակցային քաղաքականությունը գործընկեր կազմակերպությունների հետ, որոնք առավել գործնական են և ակտիվ: Դրա վառ օրինակն է «Ընտանիք» ԲՀԿ-ի և տարածաշրջանի գործատուների հետ համագործակցությունը, որը նպաստում է հաստատության շարունակական զարգացմանը: Եվս մեկ կարևոր հանգամանք, որն արժանացել է փորձագիտական խմբի ուշադրությանը և դրական արձագանքին, Ուսանողական ընկերությունների գործունեությունն է, որը լավ և կայացած փորձ է Հայաստանի Հանրապետության մասշտաբով:

Իսկ ինչ վերաբերում է շրջանավարտների զբաղվածությանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ եղած տվյալները (մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներ 2022-23թթ. կազմում են 7%) դեռևս գոհացուցիչ չեն: Փորձագիտական խումբը գիտակցում է, որ ուսանողների մոտ 90%-ը տղաներ են, և բանակ զորակոչվելու հարցը լրացուցիչ բարդություններ է ստեղծում աշխատանք գտնելու տեսանկյունից, այնուամենայնիվ այս ուղղությամբ դեռևս խորքային վերլուծություններ իրականացնելու անհրաժեշտություն կա՝ պարզելու աշխատանք չգտնելու հիմնական պատճառները: Վերլուծությունները կնպաստեն խնդիրների լուծմանն ուղղված որոշումների կայացմանը: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների ցուցանիշների բարձրացումը նոր ՌԾ-ում կարող է արտահայտվել որպես կառավարման արդյունավետության կարևոր ցուցիչներից մեկը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ուսումնարանում ներդրված է հաշվետվողականության համակարգ, առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ՝ նպաստելով Ուսումնարանի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը:

Փորձագիտական խումբի ուշադրությանն է արժանացել այն հանգամանքը, որ ուսումնարանը պատասխանատվություն է ստանձնում պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած իր շրջանավարտներին աշխատաշուկա ինտեգրելու ուղղությամբ:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Սոցիալ-տնտեսական կարևոր դերակատարությունը Գյումրի քաղաքում նախնական մասնագիտական որակավորմամբ մասնագետների պատրաստման տեսանկյունից,
2. Պետական դրամաշնորհային ծրագրերի առկայությունը և ֆինանսական կայունությունը,
3. Կրթական ծրագրերի պահանջված լինելն աշխատաշուկայում,
4. Գործատուների հետ համատեղ կրթական ծրագրեր իրականացնելու փորձառությունը,
5. Ուսանողական ընկերությունների ձևավորման հաջողված փորձառությունը,
6. Մոտիվացված և մեծ մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսական անձնակազմի առկայությունը,
7. Ուսանողներին տրվող հետազոտական և ստեղծագործական առաջադրանքները,
8. Հագեցած ռեսուրսային բազայի առկայությունը,
9. Ամենամյա ներքին գնահատումների իրականացումը,
10. Միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն ունենալու փորձառությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական ծրագրի ոչ այդքան հեռանկարային լինելը,

2. Ներքին շահակիցների ցածր մոտիվացիան Կառավարման խորհուրդի որոշումների կայացման գործընթացում,
3. Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների ցածր ցուցանիշները,
4. Դասախոսական կազմի կայունությունը,
5. Որակի ապահովման պատասխանատուի հիմնական հաստիքի բացակայությունը,
6. Որակի ապահովման համակարգի ոչ լիարժեք ներդրումը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել Զարգացման ծրագիրը՝ ՄՈՒՀ-ի առջև դնելով առավել հեռանկարային և երկարաժամկետ նպատակներ՝ հաշվի առնելով նաև ՄՈՒՀ-ի առջև դրված հիմնախնդիրները, համակարգային գնահատելով ունեցած հնարավորությունները։
2. Դիտարկել ներքին գնահատումների ձևաչափի համապատասխանեցումը ԶԾ առաջնահերթություններին համապատասխան իրականացնելու հնարավորությունը՝ ապահովելով ԶԾ-ի մշտադիտարկման ամբողջական իրականացումը։

Կառավարումն ու վարչարարությունը

3. Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների ներգրավման քաղաքականություն՝ օգտագործելով գործընկեր կազմակերպությունների հնարավորությունները։
4. Շարունակել աշխատել նոր դրամաշնորհային ծրագրերի ձեռքբերման ուղղությամբ՝ ապահովելով մարդկային կապիտալի կարողությունների շարունակական զարգացումը։

Մասնագիտության կրթական ծրագրերը

5. Մշակել և ներդնել ուսանողների գնահատման հստակ կանոնակարգ՝ ապահովելով գնահատման թափանցիկությունը։
6. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ կանոնակարգ՝ ապահովելով ՄԿԾ-ների համակարգային շարունակական բարելավումները։
7. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի բենչմարքինգի քաղաքականություն՝ նպաստելով այլ ՄՈՒՀ-երի լավագույն փորձի բացահայտմանը և տեղայնացմանը։

Ուսանողները

8. Ակտիվացնել ՈւԽ աշխատանքները՝ մոտիվացնելով ուսանողներին ներգրավվել կառույցի աշխատանքներին։
9. Համակարգային ուսումնասիրել և վերլուծել ուսանողների զբաղվածության ցածր ցուցանիշների հիմքերը՝ նպաստելով զբաղվածության աճի բարձրացմանն ուղղված ՄՈՒՀ-ի քաղաքականության մշակմանը։
10. Ակտիվացնել Կարիեռայի կենտրոնի աշխատանքները ուսանողների աշխատանքի տեղավորման հնարավորությունները մեծացնելու ուղղությամբ։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

11. Քայլեր ձեռնարկել մասնագիտական մոդուլների դասախոսական կազմի կայունացման և երիտասարդացման ուղղությամբ։

12. Քայլեր ձեռնարկել դասախոսական կազմի համար մասնագիտական վերապատրաստումներ գտնելու և նրանց մասնակցությունն ապահովելու ուղղությամբ՝ նպաստելով մասնագետների շարունակական մասնագիտական զարգացմանը։
13. Կանոնակարգել սկսնակ դասախոսներին տրվող մենթորական աջակցության գործընթացը՝ նպաստելով աշխատաքների անընդհատությանը։

Հետազոտությունը և զարգացումը

14. Մշակել և ներդնել դասախոսական անձնակազմի հետազոտական աշխատանքները խրախուսող մեխանիզմներ՝ նպաստելով նախնական մասնագիտական ոլորտի զարգացմանը։
15. Շարունակել զարգացնել ուսանողներին տրվող հետազոտական-գործնական կարողությունները զարգացնող առաջադրանքների բազան՝ ապահովելով առաջադրանքների շարունակական բարելավումը։
16. Մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների անցկացման ընդհանուր քաղաքականություն՝ ապահովելով հետազոտությունների ոլորոտում ՄՈՒՀ-ի ունեցած լավ փորձի շարունակականությունը և ընդլայնումը։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

17. Հատկացնել բուժկետի առանձնացված տարածք՝ ուսանողներին անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու նպատակով։
18. Դիտարկել բնագիտամաթեմատիկական լաբորատորիաների ստեղծման հնարավորությունը՝ ապահովելով բազային առարկաների լիարժեք իրականացումը։

Հասարակական պատասխանատվությունը

19. Իրականացնել Ուսումնարանի պաշտոնական կայքէջի թարմացումը՝ ապահովելով հագեցած տեղեկատվություն ՄՈՒՀ-ի վերաբերյալ և բարձրացնելով գրավչությունը հասարակության շրջանում:
20. Շարունակել իրականացնել կարճաժամկետ դասընթացներ՝ արձագանքելով շուկայի փոփոխություններին։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

21. Շարունակել նախաձեռնող լինել տարբեր տեղական և միջազգային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ՝ ապահովելով միջավայր դասախոսական և ուսանողական համակազմերի շարժունության և փորձի փոխանակման համար։
22. Շարունակել քայլեր իրականացնել ուսանողների և դասախոսների օտար լեզուների բարելավման ուղղությամբ՝ ընթացիկ գնահատելով դասընթացների արդյունավետությունը։

Որակի ներքին ապահովման համակարգը

23. Մշակել և ներդնել ՈԱ պատասխանատուի պաշտոնի նկարագիր՝ սահմանելով աշխատակցի գործառույթները, պարտականությունները։
24. Կիրառել և գնահատել ՈԱ համակարգի համար ձևավորված փաստաթղթային հենքը՝ ապահովելով վերջիններիս լիարժեք հարմարումը Ուսումնարանի կարիքներին։

25. Տարանջատել և հստակեցնել ներքին և արտաքին շահակիցների դերակատարությունը ՈԱ գործընթացներում։
26. Ներդնել մեխանիզմներ ՈԱ գործընթացների թափանցիկությունն ապահովելու համար։

_____

Քրիստինե Հակոբյան

Փորձագիտական խմբի ղեկավար

23.02.2024

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Քրիստինե Հակոբյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,

Ելենա Մարտիրոսյան՝ Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ,

Խաչիկ Շահբազյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան՝ Տեխնոլոգիաների կառավարման ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,

Արամ Հակոբյան՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ: Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը 10.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և ՄԿՈՒ հաստատություններում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը հունվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել Ուսումնարանի հետ: Աշխատաժողովների ընթացքում ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն: ՄՈՒՀ-ն իրականացրել է նաև SWOT վերլուծություն Դասախոսական կազմ չափանիշի շրջանակներում, որը դիտարկվել է ՈԱԱԿ-ի աշխատակիցների կողմից՝ հաստատությանը որոշակի ուղղորդում տրամադրելու նպատակով: Ուսումնարանին ընթացիկ աջակցություն տրամադրելու և հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել է նաև միջանկյալ հանդիպում 1-ը մարտի 2023թ.:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՄԿՈՒ հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին համապատասխանելու մասով: ՄՈՒՀ–ի ներկայացրած ինքնավերլուծությունը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին և 23-ը օգոստոսի 2023թ. ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության կողմից ձևավորված 5 խմբերի կողմից, ներգրավված են եղել դասախոսներ, վարչական կազմի ներկայացուցիչներ, ուսանող և գործատու:

Նախապատրաստական փուլ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է Ուսումնարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով: Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Ուսումնարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախնական այց

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2023թ. նոյեմբերի 7-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում ուսումնարանի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. նոյմբերի 13-16-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Ուսումնարանի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև ռեսուրսների դիտարկում[3] և փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է Ուսումնարանին 12.01.2023թ.: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 31.01.2024թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 08.02.2024թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Այնուհետև փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող
23.02.2024թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 2009թ.-ին: Ուսումնական հաստատությունն, իր կանոնադրության համաձայն, իրականացնում է նախնական մասնագիտական կրթական ծրագիր՝ միջնակարգ կրթության հիմքով և նախնական մասնագիտական կրթական ծրագիր հիմնական կրթության հիմքով:

2. Կրթություն. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանն իրականացնում է նախնական մասնագիտական կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝ «Համակարգիչների շահագործում», «Ոսկերչություն», «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիիկական սպասարկում և նորոգում», Գեղանկարչություն և քանդակագործություն»:

Ուսումնական պարապմունքներն իրականացվում են համակցելով դասավանդման բազմաբնույթ և ժամանակակից մեթոդներ՝ համագործակցելով մասնագիտական ուսումնական այլ հաստատությունների և համապատասխան գործատուների հետ:

3. Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. ՄՈՒՀ-ն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակներում ակտիվացնում է մասնագիտական ստեղծագործական և հետազոտական գործունեությունը, ըստ արդիականության և կիրառելիության, ստեղծում է նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և աշխատանքային նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

4. Արտաքին կապեր. Ուսումնական գործընթացն առավել նպատակային կազմակերպելու, աշխատաշուկան որակյալ և պահանջված շրջանավարտներով համալրելու համար ուսումնարանը նպատակ ունի բավարարել նաև արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, ընդլայնել համագործակցության շրջանակը: Ուսումնարանը 2022 թ. գրանցվել է միջազգային «Էրազմուս+» ծրագրին: Ուսումնարանը ստացել է բազմաթիվ առաջարկներ եվրոպական կազմակերպությունների կողմից՝ համատեղ ծրագրեր իրականացնելու կանաչ տեխնոլոգիաների, աշխատանքի վրա հիմնված ուսուցման, օտար լեզվի զարգացման, մասնագիտական կողմնորոշման, էկոլոգիայի պահպանման, էկոսննդի մշակման և այլ կարողությունների զարգացման վերաբերյալ:

5. Որակի ապահովում. Ուսումնարանի գործունեության ներքին գնահատման նպատակն է՝ նպաստել իրականացվող ծառայությունների մատուցման, կրթության որակի և արդյունավետության բարելավմանը, շահառուների՝ ուսանողների և ծնողների ուսումնարանի մանկավարժական կազմի, աշխատողների, համագործակցող կազմակերպությունների և գործատուների իրազեկվածության աստիճանի և ուսումնարանի հաշվետվողականության մեխանիզմների բարձրացմանը: Ուսումնական հաստատությունը չունի որակի գնահատման պատասխանատու և մշտապես գործող հանձնախումբ, սակայն ուսումնական հաստատության գործունեության որակի մշտադիտարկման և բարելավումների համար իրականացվում է ներքին գնահատում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն է, որը հիմնադրվել է 2009 թվականին: Ուսումնարանն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է կանոնադրությամբ և հնգամյա Զարգացման ծրագրով (2021-2026թթ.): Ուսումնարանի առաքելությունը սահմանված է Զարգացման ծրագրում, որը հետևյալն է՝ «Ուսումնատեխնիկական միջոցներով զինված բարենպաստ միջավայրում և գործատուների հետ սերտ համագործակցությամբ իրականացնել տնտեսության պահանջներին համապատասխան, կարողությունների զարգացմանը միտված նախնական մասնագիտական հիմնական և լրացուցիչ բարձրորակ կրթական ծառայություններ: Պատրաստել երկրի զարգացման ուղղություններին համապատասխան հիմնարար ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով որակյալ և մրցունակ մասնագետներ: Նպաստել անհատի շարունակական զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու դերի բարձրացմանը և համակողմանի ձևավորմանը, ուսումնական հաստատության և մասնավոր հատվածի միջև վստահելի գործընկերության զարգացմանը, նաև ներառականության և հավասարության ամրապնդմանը»:

ՄՈՒՀ-ում իրականացվում է նախնական մասնագիտական 7 կրթական ծրագիր՝ ՈԱԾ-ի 3-րդ և 4-րդ մակարդակներին համապատասխան:

Զարգացման ծրագիրը հաստատվել է 2021 թվականին գործող տնօրենի ընտրության ժամանակ, այն բաղկացած է 14 հիմնախնդրից, վերջիններիս համար առանձնացված են նաև լուծման ուղիներ: ԶԾ-ում Ուսումնարանն իր առջև դրել է նաև ռազմավարական 7 նպատակ, անհրաժեշտ է նշել, որ սահմանված հիմնախնդիրներն առավել ընդգրկուն են, քան՝ նպատակները: ՄՈՒՀ-ի ԶԾ նպատակներն են՝

1. Ուսանողական ընկերությունների գործունեության խթանում, ձեռնարկատիրական հմտությունների զարգացում,
2. Նյութատեխնիկական բազայի համալրում և թարմացում (մասնավորապես «Գեղանկարչություն և քանդակագործություն» և «Ոսկերչություն» մասնագիտական արհեստանոցների օդափոխման համակարգերով ապահովում),
3. 644 քմ չօգտագործվող տարածքների հիմնանորոգում, արհեստանոցների հիմնում և նոր մասնագիտությունների ներդրում աշխատաշուկայի պահանջների փոփոխությանը զուգընթաց, «Գեղանկարչություն և քանդակագործություն» և «Ոսկերչություն» մասնագիտական արհեստանոցների վերանորոգում,
4. Կառավարման արդյունավետության բարձրացում, վերահսկման նոր մեխանիզմների ներդրում,
5. Ուսման որակի բարձրացում, ֆինանսական միջոցների բարելավում,
6. Սոցիալական գործընկերության ընդլայնում,
7. Հանրային իրազեկում և հետադարձ կապի ապահովում:

Անհրաժեշտ է նշել, որ սահմանված նպատակների մեծ մասն իրենից ենթադրում է ֆինանսական և նյութատեխնիկական բարելավումներ, վերջիններս ենթադրում են առավել կարճաժամկետ գործընթացներ և ոչ երկարաժամկետ բարեփոխումներ։ Յուրաքանչյուր նպատակի համար սահմանված են նաև խնդիրներ, որոնց լուծման դեպքում Ուսումնարանը կկարողանա հասնել իր նպատակներին։ Պլանավորված նպատակների իրականացման համար Զարգացման ծրագրում մշակված է նաև գործողությունների պլան-ժամանակացույց, որտեղ առանձնացված են նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները, դրանցից ակնկալվող արդյունքը, արդյունքի վերահսկողությունը-գնահատումը, իրականացման ժամկետը, ներդրումները-ֆինանսական միջոցները, հնարավոր ռիսկերը և պատասխանատուները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023թ. վերջի դրությամբ ռազմավարական ծրագրում սահմանված բոլոր նպատակները գրեթե իրականացվել են, կան նաև այնպիսիք, որոնք նույնիսկ առավել են իրականացվել, օրինակ՝ 644մ² չօգտագործված տարածքների վերանորոգման փոխարեն բարեկարգվել է 844մ² տարածք։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ղեկավար կազմը նպատակադրված է վերախմբագրել ՌԾ-ն՝ սահմանելով նոր առաջնահերթություններ կրթական ծրագրերի ներդրման, միջազգայնացման ուղղությամբ։ ՄՈՒՀ-ը նպատակադրված է ապագայում ներդնելու նաև միջին մասնագիտական կրթական ծրագրեր, օրինակ՝ «Ռոբոտաշինություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»։ Ծրագրերի ներդրման համար ՄՈՒՀ-ը կարիք ունի փոխելու իր անվանումը (Ուսումնարանից դառնալով քոլեջ) և կանոնադրական նպատակները։ Ծրագրերի ներդրման համար ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը սպասում է Մասնագիտական կրթության և ուսուցման նոր օրենքի ընդունմանը, որտեղ բոլոր ՄԿՈՒ հաստատությունները դառնալու են քոլեջներ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Զարգացման ծրագրի մշակումից առաջ արտաքին և ներքին շահակիցների կարիքները վերհանելու և դրանք ԶԾ-ում ներառելու նպատակով իրականացվել են հարցումներ, կազմակերպել են հանդիպումներ։ Հարցումների վերլուծությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներքին շահակիցները ուսումնական գործընթացի, դասախոսական անձնակազմի գնահատման ուղղությամբ ոչ մի խնդիր կամ բարելավման ենթակա կողմ չեն առաջադրել, ուսումնարանի իրականացրած գործունեությունն ամբողջությամբ բավարարել է նրանց սպասելիքները։ Գործատուների շրջանում իրականացված հարցումների արդյունքների ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս, որ վերջիններս հիմնականում գոհ են Ուսումնարանի շրջանավարտներից և այլ առաջարկություններ չունեն։

Ուսումնարանն իր ռազմավարական նպատակների իրականացման, գնահատման և բարելավման հիմնական մեխանիզմ է դիտարկում ներքին գնահատումները և ստորաբաժանումների հաշվետվությունները: Հաշվետվությունները կազմվում են՝ ըստ սահմանված պլան- ժամանակացույցի: Ուսումնարանն արդեն չորս ուսումնական տարի է իրականացնում է ներքին գնահատումներ, վերջինս ամբողջովին չի իրականացվում սահմանված ՌԾ նպատակներին համապատասխան, սակայն որոշակիորեն անդրադառնում է դրանց: Ներքին գնահատման մեջ ՄՈՒՀ-ն անդրադառնում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցանվող մասնագիտություններում ուսանողական համակազմի բաշխվածության, շարժի դինամիկայի, դասավանդողների վերաբերյալ ընդհանուր տվյալների, տարիքային բաշխվածության, ղեկավար կազմի կոմպետենցիաների, նյութատեխնիկական բազայի հագեցվածության կարիքի և այլնին: Բացի այդ, յուրաքանչյուր քանակական տվյալ ամփոփվում է վերլուծությամբ, իսկ վերջում՝ SWOT վերլուծությամբ: Գնահատումն իրականացվում է հատուկ ձևավորված հանձնաժողովի կողմից: Գնահատումների հիման վրա հանձնաժողովը տալիս է նոր ազդակներ, օրինակ՝ ուսումնական զենքի համար առանձնված տարածքի, բուժկետի առանձին տարածքի ստեղծում և այլն, որոնք դառնում են ռեսուրսների պլանավորման և այլնի հիմք:

Դատողություններ (ըստ չափանիշի): Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ուսումնարանը գիտակցում է իր դերակատարությունը նախնական մասնագիտական կրթությամբ մասնագետներ պատրաստելու, և շուկան համապատասխան կադրերով ապահովելու գործում, ինչն իր դրական ազդեցությունն ունի նաև քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա:

Դրական է, որ երկարաժամկետ պլանավորման և սահմանված նպատակների ուղղությամբ ՄՈՒՀ-ը գրանցել է առաջընթաց՝ երբեմն գերակատարելով իր կողմից սահմանած նպատակների իրականացումը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբն արձագանքում է, որ Ուսումնարանը կարող է իր առջև դնել առավել հեռանկարային նպատակներ, օրինակ՝ դասախոսական և ուսանողական համակազմերի միջազգայնացման գործընթացներում ներգրավելը: Նման մոտեցումը կնպաստի ոչ միայն ՄՈՒՀ-ի ֆինանսատնտեսական միջոցների բարելավմանը, այլև մարդկային կապիտալի զարգացմանը և նորարարության շարունակական ապահովմանը: Միևնույն ժամանակ գնահատելի է, որ ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը արդեն սկսել է այս ուղղությամբ իրականացնել որոշակի աշխատանքներ:

Զարգացման ծրագիրն անդրադարձ է կատարում նաև Ուսումնարանի հիմնախնդիրներին, որոնք իրենց ընդգրկվածությամբ առավել լայն են և հեռանկարային, փորձագիտական խումբը գտնում է, որ եթե ռազմավարական նպատակներն ամբողջովին ներառեն այդ հիմնախնդիրները, ապա ԶԾ-ն ՄՈՒՀ-ի համար կդառնա առավել երկարաժամկետ պլանավորման գործիք՝ ապահովելով հեռահար գործընթացներ:

Գովելի է Ուսումնարանի դիրքորոշումը ներքին և արտաքին շահակիցներին ռազմավարական պլանավորման գործընթացներում ներգրավելու ուղղությամբ, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ կարիքների վերհանման մեխանիզմները անհրաժեշտություն ունեն բազմազանեցնելու և զարգացնելու, որը թույլ կտա բացահայտելու ապագայամետ և զարգացմանը մղող առաջնահերթություններ՝ ապահովելով ՄՈՒՀ-ի շարունակական զարգացումը:

Փորձագիտական խումբը դրականորեն ընդգծում է, որ Ուսումնարանի ստորաբաժանումների հաշվետվությունները բացի կարճաժամկետ պլանավորման գնահատումներ լինելուց, հնարավորություն են ընձեռում գնահատելու ռազմավարական պլանավորման իրականացումը: Գնահատելի է, որ արդեն չորրորդ տարին է ՄՈՒՀ-ը որդեգրել է ներքին գնահատում իրականացնելու մշակույթը, վերջինս հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ոչ միայն որոշակիորեն մշտադիտարկել ԶԾ-ի իրականացումը, այլև գնահատել ՄՈՒՀ-ի ունեցած հնարավորությունները, բացահայտել բացթողումները, իրականացված աշխատանքները համեմատել նախորդ ժամանակահատվածի հետ և կատարել նոր պլանավորումներ: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ը ներքին գնահատումները կարող է իրականացնել ԶԾ նպատակներին համապատասխան, վերջինս առավել թիրախային գործիք կարող է դառնալ ԶԾ-ի ամբողջական մշտադիտարկման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի հստակ սահմանված առաքելություն, որն արտահայտում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները, առկա է ռազմավարական ծրագիր, վերջինիս իրականացման պլան-ժամանակացույց, ՌԾ-ի արդյունավետությունը գնահատող որոշակի մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը բավարարում է Չափանիշ1-ի պահանջները:

Եզրակացություն: Գյումրու թիվ 4 պետական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն է, որն առաջնորդվում է իր կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով և կարգադրություններով: Ուսումնարանը կառավարվում է հինգ տարի ժամկետով ձևավորված կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից, իսկ գործադիր մարմինը տնօրենն է:

Կառավարման նոր խորհուրդը ձևավորվել է 2022 թ. ամռանը և բաղկացած է 11 անդամից: Խորհուրդն ունի կանոնակարգ, որի համաձայն տարվա ընթացքում հրավիրվում է պարտադիր 4 նիստ, ունի երեք տարվա հաստատված աշխատակարգ: Առկա են խորհրդի արձանագրությունները, որոնց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նիստերն իրականացվում են առկա ձևաչափով և նիստերի ժամանակ քննարկվում են ուսումնարանի կառավարման, ֆինանսական և կրթական ոլորտի պլանավորման և կանոնակարգով սահմանված այլ հարցեր: Կառավարման խորհրդում ներգրավված են նաև գործատուներ, որոնց հետ համատեղ Ուսումնարանը ներդրել և իրականացնում է կրթական ծրագրեր, օրինակ՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում»:

Ուսումնարանն ունի մանկավարժական խորհուրդ, որը կազմավորվում է ամեն տարի օգոստոսյան առաջին նիստում, մանկավարժական խորհրդի անդամ են տնօրենը, տեղակալները, ուսմասվարը, ավագ վարպետը, առարկայական մեթոդական միավորումների նախագահները և մանկավարժ աշխատողները: Մանկավարժական խորհրդում քննարկվում են ուսումնադաստիարակչական, կազմակերպչական և ուսումնական գործընթացի հետ կապված հարցեր:

Ուսումնարանում գործում է ծնողական խորհուրդ, որը ստեղծված է հաստատության գործունեությանը աջակցելու, ծնողների և հաստատության միջև համագործակցությունն ապահովելու նպատակով: Խորհուրդը հիմնականում զբաղվում է ուսանողների հետ կապված կրթադաստիարակչական և կազմակերպչական հարցերով՝ էքսկուրսիաների կազմակերպում, ուսանողների բացակայությունների, վարքի հետ կապված քննարկումների կազմակերպում և այլն:

ՄՈՒՀ-ում գործում է նաև Ուսանողական խորհուրդը, որն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Ուսանողական խորհրդի ձևավորման համար ուսումնարանում ձևավորվում է ընտրական հանձնախումբ, որի կազմում են տնօրենը, տեղակալները, ուսմասվարը, կարիերայի ուղղորդման պատասխանատուն և զինղեկը: Ուսխորհրդի հիմնական գործառույթներից է նաև ուսանողների առօրյան կազմակերպող, ժամանցային միջոցառումների իրականացումը:

Ուսումնարանում գործում է 3 առարկայական մեթոդական միավորում՝ մասնագիտական, հումանիտար և բնագիտամաթեմատիկական, վերջիններս ստեղծվում են նույն առարկայի/ մոդուլի երեք և ավելի դասախոս/վարպետի առկայության դեպքում: Մեթոդմիավորումները ուսումնասիրում, ընդհանրացնում են մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում, տարակարգ չունեցող դասախոս/վարպետներին նախապատրաստում են ատեստավորման, կազմակերպում են մասնագիտական, մանկավարժական, մեթոդական խորհրդատվություններ և այլն: Մեթոդմիավորման որոշումները քննարկվում են մանկավարժական և կառավարման խորհուրդներում:

Ուսումնարանի ներքին գործընթացները կառավարվում են ուսումնական մասի և մնացյալ ստորաբաժանումների և վարչական անձնակազմի կողմից, որոնց պատասխանատուներն ունեն հստակեցված պարտականություններ՝ արտահայտված պաշտոնի նկարագրերում: Բոլոր կրթական ծրագրերը կառավարվում են տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների և կրթական ծրագրերի պատասխանատուների կողմից: Յուրաքանչյուր կառավարման օղակ առաջնորդվում է իր կանոնակարգով:

Ուսումնարանի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ով վերընտրվել է 2021 թվականին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենը մեծ հարգանք և հեղինակություն է վայելում ուսանողների, աշխատակիցների և ծնողների շրջանում: Շահակիցները որոշումների կայացման գործընթացում անվերապահորեն վստահում են վերջինիս:

ՄՈՒՀ-ն ունի կառավարման կառուցվածք, որտեղ հստակ արտահայտված են կառուցվածքային միավորների, ստորաբաժանումների միջև փոխկապակցվածությունը:

Ուսումնարանի հիմնական ֆինասավորման աղբյուրը պետական բյուջեն է, ըստ որի իրականացվում է ֆինանսական միջոցների բաշխում՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների (գույքի ձեռքբերում, վերանորոգում, աշխատավարձ և այլն): 2021, 2022, 2023 թվականների ֆինանսատնտեսական գործունեության պլանավորումները ուսումնասիրելիս պարզվեց, որ բացի հիմնական ֆինանսական մուտքերից (պետական բյուջե) ուսումնարանն ունի մուտքեր նաև պետական դրամաշնորհներից (պետական բյուջեից), որոնք կազմում են ընդհանուր մուտքերի շուրջ 35 %-ը (երկու տարվա կտրվածքով): Ընդհանուր ծախսերի 54%-ը բաժին է ընկնում աշխատավարձին, 5%-ը՝ ծառայությունների մատուցմանը, իսկ 35%-ը հիմնական միջոցների ձեռքբերմանը: Անհրաժեշտ է նշել, որ կրթական ծրագրերի համահավասար զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը կարևորում է բոլոր ՄԿԾ-ների ռեսուրսային հագեցվածության ապահովումը:

Ուսումնարանը մասնագետների վերապատրաստման համար ծախս չի նախատեսել, վերջինս ՄՈՒՀ-ի ռազմավարական հիմնախնդիրներից է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնարանը կադրերի ներգրավման ուղղությամբ ունի որոշ դժվարություններ (տարածաշրջանի սուղ աշխատաշուկան, մասնագետների պակասը, ցածր աշխատավարձը), կան աշխատակիցներ, ովքեր իրականացնում են երկու տարբեր գործառույթ, օրինակ՝ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին հանձնարարված է որակի պատասխանատուի պարտականությունները, ավագ վարպետին՝ դուալի ղեկավարի, տնօրենի օգնականին՝ միջազգային կապերի հաստատման (հասարակական կարգով), գործավարին՝ կադրերի տեսուչի և այլն: Կադրերի պակաս է նկատվում նաև կրթական ծրագրերի շրջանակներում, ՄՈՒՀ-ի մի քանի կրթական ծրագրերում մասնագիտական մոդուլները դասավանդվում են մեկ վարպետի կողմից, օրինակ՝ «Ոսկերչություն», «Համակարգիչների շահագործում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և այլն: Դասախոսական կազմի սակավությունը ՄՈՒՀ-ը փորձում է հաղթահարել նաև սեփական ռեսուրսի՝ շրջանավարտների, զարգացման և ուսումնական գործընթացում ներգրավելու հաշվին:

Ըստ ուսումնարանի կանոնադրության՝ ներքին շահակիցները ներգրավված են տարբեր խորհուրդներում, մասնավորապես՝ 3 ուսանող և 2 դասախոս կառավարման խորհրդի անդամ են, դասախոսները մանկավարժական խորհրդի անդամներ են, իսկ ուսանողները՝ ուսանողական խորհրդի: Կառավարման խորհրդի արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներքին շահակիցները առաջարկություններով հանդես չեն գալիս, հիմնականում ցուցաբերում են պասիվ մասնակցություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական և կառավարչական որոշումների կայացումը ներքին շահակիցները վստահում են տնօրենին:

Ներքին շահակիցները հիմնականում ակտիվություն դրսևորում են Մանկավարժական խորհրդում՝ մասնակցելով կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ուսանողներին տրվող ուսումնառության նյութերի, առաջադրանքների քննարկմանը և այլն:

Ուսումնարանը որպես երկարաժամկետ պլանավորում դիտարկում է 2021-2026 ռազմավարական ծրագիրը, անհրաժեշտ է նշել, որ վերջինս 2023թ. վերջին մոտեցել է իր ավարտին և ծառայել է առավելապես միջնաժամկետ պլանավորման գործիք: Առկա են տնօրենի տարեկան աշխատանքային պլանները, որտեղ առաձնացված են տարեկան աշխատանքային գործընթացները, նշանակված են պատասխանատուներ, իսկ ստորաբաժանումների և հաստիքային աշխատողների տարեկան պլանավորումները տնօրենի պլանավորման կատարողականներն են և ուսումնարանի գործընթացների կազմակերպման հիմքը: Ուսումնարանն արդեն 4 ուսումնական տարի է իրականացնում է ներքին գնահատումներ 1 տարվա կտրվածքով, վերջիններիս ուսումնասիրությունները ցույց տվեց, որ դրանք հիմնականում իրականացվում են ներքին կարիքների, հնարավորությունների բացահայտման, կատարված աշխատանքների մշտադիտարկման համար և արդյունքները ներառվում են նոր ուսումնական տարվա պլանավորման գործընթացում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսումնարանը կարևորում է իր գործընթացների, պլանավորումների վրա ազդող արտաքին և ներքին գործոնների դերը: Ուսումնարանն իր զարգացմանը նպաստող արտաքին գործոն դիտարկում է Erazmus + միջազգային ծրագրին մասնակցությունը, հաջողություն գրանցելու նպատակով ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել արտասահմանցի գործընկերներ գտնելու և ծրագիր առաջադրելու գործում: Իսկ ինչ վերաբերում է կրթական ծրագրերին, ապա անհրաժեշտ է նշել, գործատուների կարիքներից, արձագանքներից և աշխատատեղերի ուսումնասիրությունից ելնելով ՄՈՒՀ-ը «Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա» կրթական ծրագիրը փոխարինվել է նոր՝ «Գեղանկարչություն և քանդակագործություն» ծրագրով[5]: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման որոշումների հիմքում ընկած են կոնկրետ վերլուծված տվյալները, օրինակ՝ գործատուներից ստացված գրություն-առաջարկությունները:

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի իրականացմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ Ուսումնարանի գործընթացների մեծ մասում վերջինս լիարժեքորեն գործում է, օրինակ՝ կրթական ծրագրերում, հաշվետվողականության, ռեսուրսների ձեռքբերման գործընթացներում և այլն: Երբեմն տեսանելի են միայն որոշ խնդիրներ պլանավորման գործընթացում, ՄՈՒՀ-ն իրականացնում է ավելին, քան պլանավորում է, օրինակ՝ գործատուների հետ համատեղ կրթական ծրագրի իրականացումը, վերջինս ՌԾ առաջնահերթությունը չէ, բայց ՄՈՒՀ-ն այդ ուղղությամբ ունի ձեռքբերումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնարանի կրթական և այլ գործընթացների գնահատման նպատակով իրականացվում են հարցումներ, որոնք կազմակերպում և իրականացնում են որակի պատասխանատուի պարտականություններ կատարողը և տնօրենի օգնականը, բացի այդ ուսումնարանում իրականացվող գործընթացների մասին իրենց կարծիքն են հայտնում ծնողները՝ շնորհակալական նամակներով: Հարցումները ուղղված են դասախոսի գնահատմանը, դասավանդման որակի և արդյունավետության, ուսումնարանի ռեսուրսների, մատուցվող ծառայությունների, կրթական ծրագրերի և գործատուների կողմից շրջանավարտների գնահատմանը:

[5] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվությունը Ուսումնարանը լուսաբանում է պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջերի, ցուցադրությունների միջոցով: ՄՈՒՀ-ը պարբերաբար հրապարակում է ուսանողների իրականացրած աշխատանքները՝ կայանների տեղադրում, սննդի, զարդերի պատրաստում և այլն: ՄՈՒՀ-ի համար ՄԿԾ-ների որակի ապահովման ցուցանիշ է նաև տարբեր մրցույթներում՝ օրինակ՝ «Աշխարհի Հմտություններ» (WorldSkills International), ուսանողների գրանցած հաջողությունները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման արդյունքում ուսանողերի գրանցած առաջընթացը: Պետական որակավորող հանձնաժողովների հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջիններս հիմնականում գոհ են ուսանողների արդյունքներից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում կառավարչական գործընթացները հիմնված են կոլեգիալության վրա, ստեղծված խորհուրդները, խորհրդակցական մարմինները իրականացնում են ընթացակարգերով իրենց վերապահված գործառույթները, որոնք նպաստում են ուսումնարանում իրականացվող գործընթացների շարունակականությանը: Հաշվի առնելով ուսանողների տարիքային առանձնահատկությունները՝ փորձագիտական խումբը հատուկ կարևորում է, որ Ուսումնարանն իր կառավարման գործընթացներում ներգրավել է նաև ծնողներին: Նման մոդելը հնարավորություն է ստեղծում ծնողներին ակտիվ մասնակից դարձնել նաև ուսումնական գործընթացներին, որտեղ վերջիններս հանդես են գալիս որպես աջակցող, խնդիրներ վերհանող և ուսումնարան-ծնող կարևոր համագործակցության հիմք:

Ստորաբաժանումների և աշխատակազմի հստակեցված պարտականությունները հնարավորություն են տալիս աշխատանքային գործընթացի արդյունավետ կազմակերպմանը՝ ըստ ենթակայությունների և սահմանված գործառույթների: Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ Ուսումնարանը տարեկան բյուջեն պլանավորելիս առաջնորդվում է նաև ռազմավարական առաջնահերթություններով, համահավասար ուշադրություն են դարձվում բոլոր կրթական ծրագրերի նյութական հագեցվածությանը, ինչի արդյունքում պարբերաբար թե՛ բյուջետային, թե՛ այլ ֆինանսական միջոցների ներգրավմամբ տեղի է ունենում ռեսուրսային բազայի համալրում, նման մոտեցումը նպաստում է ՄԿԾ-ների շարունակական և համազոր զարգացմանը:

Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ն ակտիվություն է դրսևորում տարբեր պետական դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու ուղղությամբ, որը հնարավորություն է տվել Ուսումնարանին ունենալու ֆինանսական հավելյալ միջոցներ՝ ապահովելով կրթական ծրագրերի իրականացման համար ժամանակակից և գրավիչ միջավայր:

Հաշվի առնելով տարածաշրջանային դիրքավորումը՝ ՄՈՒՀ-ն ունի մարդկային ռեսուրսի ներգրավման խոչընդոտներ, այս ուղղությամբ Ուսումնարանը կարիք կունենա մարդկային ռեսուրսի ներգրավման հստակ ռազմավարության, որն իր մեջ կներառի բոլոր այն հնարավորությունները (գործատուներ, գործընկերներ, այլ ՄԿՈՒ հաստատություններ, շրջանավարտներ և այլն), որտեղից հնարավոր կլինի ներգրավել ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական/ուսումնաօժանդակ կազմ: ՄՈՒՀ-ը, մասնագետների համար առավել գրավիչ դառնալու նպատակով, կարիք կունենա աշխատավարձերի բարձրացման կամ կատարողականով պայմանավորված հավելավճարների, լրավճարների տրամադրման, նման մոտեցումը կարող է նպաստել աշխատակիցների առավելությունների բացահայտմանը և հավելյալ ռեսուրսների ներգրավմանը դրամաշնորհային ծրագրերի տեսքով: Հաշվի առնելով դրամաշնորհային ծրագրեր գտնելու և իրականացնելու ՄՈՒՀ-ի փորձառությունը, փորձագիտական խումբը համոզված է, որ ՄՈՒՀ-ն ունի բոլոր հնարավորությունները գտնելու այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված կլինեն մարդկային կապիտալի կարողությունների զարգացմանը, քանի որ առաջավոր շրջափուլ մտնելու ամենակարևոր պայմաններից մեկը կարողունակ մարդկային ռեսուրսի առկայությունն է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՌԾ-ի կատարման հիմքում ընկած են ուսումնարանի ստորաբաժանումների տարեկան պլանները, իսկ վերջիններիս մշտադիտարկման մեխանիզմ են հանդիսանում նաև տարեկան ներքին գնահատումները: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին գնահատումները կարող են համապատասխանեցվել ՌԾ նպատակներին՝ գործիքն առավել թիրախային դարձնելու նպատակով:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալելիս հաշվի է առնում ներքին և արտաքին գործոնները, որը կարող է նպաստել ՄՈՒՀ-ի երկարաժամկետ զարգացմանը և եղած ռիսկերի կառավարմանը: Գովելի է, որ ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը տեսանելի է ՄՈՒՀ-ում իրականացող մի շարք գործընթացներում, որն ապահովում է Ուսումնարանի շարունակական բարելավումը: Այս ուղղությամբ փորձագիտական խումբը նշում է, որ ռազմավարական պլանավորման գործընթացներն առավել շատ պետք է լինի ՄՈՒՀ-ի ուշադրության կենտրոնում, վերջինս լիարժեք իրականացնելու համար ՄՈՒՀ-ը կարիք կունենա իր ունեցած հնարավորությունների համակարգային գնահատման, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու առավել ճշգրիտ պլանավորման գործընթաց:

Գնահատելի է, որ ուսումնարանը ներդրել է կրթական ծրագրերը և ՄՈՒՀ-ում իրականացվող տարաբնույթ գործընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ, որոնք կրկին հաստատում են շահակիցների այն դիրքորոշումը, որ ՄՈՒՀ-ը կառավարվում է արդյունավետ: Այս ուղղությամբ փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ը կարող է նաև հրապարակել իր հաջողության հասած շրջանավարտների պատմությունները, մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տվյալները, նման մոտեցումը առավել կմեծացնի ՄՈՒՀ-ի ունեցած հեղինակությունը շուկայում և շահակիցների շրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանն ունի կառավարման գործընթացների արդյունավետությունն ապահովող մարդկային և նյութական ռեսուրսներ, ներդրված է որոշումների կայացման կոլեգիալ մոտեցում, ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը, առկա է ֆինանսների բաշխման, այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթայթման մեխանիզմներ, ուսումնարանում իրականացվող գործընթացները կանոնակարգված և փոխկապակցված են, պարբերաբար իրականացվում է ներքին գնահատման գործընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը բավարարում է Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանն իրականացնում է նախնական մասնագիտական 7 կրթական ծրագիր՝ «Համակարգիչների շահագործում», «Ոսկերչություն», «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում», «Գեղանկարչություն և քանդակագործություն»:[6]

Կրթական ծրագրերից «Խոհարարական գործ»-ը 2018-2019 ուստարվանից իրականացվում է դուալ ձևաչափով: 2023 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ ուսումնարանում կրթություն է ստանում 234 ուսանող:

Բոլոր կրթական ծրագրերը հիմնված են պետական կրթական չափորոշիչների հենքի վրա: ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը և վարպետները մասնակցում են պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը: Կրթական ծրագրերը պարունակում են մոդուլային և առարկայական ծրագրեր, ուսումնառության պլաններ, ուսումնառության նյութեր, թեմատիկ պլաններ, որոնք մշակված են ըստ կարգի և վավերացված են:

[6] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին: «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» կրթական ծրագրում ներդրվել է «Էլեկտրոնային կառավարմամբ կենցաղային սարքավորումների վերանորոգում» (30 ժամ) առարկան, «Խոհարարական գործ» ՄԿԾ-ում՝ «Համեմունքներ» (26 ժամ) և «Խմորային պատրաստուկներ, թխվածքներ» (36 ժամ) առարկանները, իսկ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» ՄԿԾ-ում՝ «Մազերի քիմիական ուղղում» (16 ժամ) և «Մազերի երկարացում, հյուսում» (36 ժամ) առարկանները[7]: «Կրթական ծրագրերում փոփոխությունները տեղի են ունենում դասավանդող դասախոսների և վարպետների առաջարկով ու մեթոդմիավորման որոշմամբ՝ հիմք ընդունելով շուկայի կարիքները:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա, արտադրական պրակտիկա և նախաավարտական պրակտիկա: «Խոհարարական գործ» մասնագիտության դուալ գործնական պարապմունքները գործատուների մոտ սկսվում են դեռ առաջին կուրսից, առաջին կուրսի ուսանողները շաբաթական մեկ օր են լինում գործատուի մոտ, իսկ երկրորդ և երրորդ կուրսերը՝ շաբաթական երկու անգամ: Այդ ուղղությամբ ուսումնարանը ներգրավել է ոլորտի 11 գործատու: «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության ուսանողները իրենց պրակտիկան անցկացնում են Գյումրիում գործող «Լենտեքս» ՍՊԸ կարի ֆաբրիկայում, իսկ վարսահարդարները շաբաթը մեկ օր գնում են համագործակցող վարսահարդարման սրահներ:

Դուալի պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ըստ ձեռքբերվող կարողությունների առկա են նշումներ կարողությանը համապատասխանելու հետ կապված, իսկ ոչ դուալ ձևաչափով իրականացվող մասնագիտությունների պրակտիկայի օրագրերում առկա են պրակտիկայի թեմայի բովանդակության վերաբերյալ նշումներ, պրակտիկայի ղեկավարի կարծիքը և գնահատականը: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ղեկավարը բնութագրում է այն կարողություններն ու հմտությունները, որոնք ուսանողը ձեռք է բերել պրակտիկայի ժամանակ:

Ուսումնարանում դասախոսների կողմից դասապրոցեսի ընթացքում կիրառվող դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում առկա չէ, սակայն փորձագիտական այցից և դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները առավելապես կիրառում են բացատրման, ներկայացման, փորձելով սովորելու մեթոդները: Հիմնականում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, քանի որ բոլոր կրթական ծրագրերը գործնական հմտություն և կարողություն ձևավորող են: «Խոհարարական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում առկա է ուսումնառության ընթացքում պատրաստվող բաղադրատոմսերի պարտադիր ցանկ, որոնք վերաբերում են բոլոր մասնագիտական մոդուլներին, կան տարբեր ուտեստների համար անհրաժեշտ մթերքի հաստատված ցանկ և պատրաստման քայլեր: Ինքնուրույն առաջադրանքների հաստատված ցանկ առկա է նաև «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» և «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիիկական սպասարկում և նորոգում» ծրագրերի շրջանակներում:

[7] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա

Գործնական ուսուցումը և հմտության ձեռքբերումը ՄՈՒՀ-ում տեղի է ունենում անմիջապես աշխատանքի ընթացքում: Օրինակ՝ արտադրական ուսուցման ժամերին «Խոհարարական գործ» ՄԿԾ-ի ուսանողները խմորից ուտեստների պատրաստման ժամանակ վարպետների հետ միասին ընտրում են ալյուրը, հունցում և պատրաստում: «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները վերանորոգում են խափանված սարքեր՝ վարսահարդարիչներ, էլեկտրական վառարաններ և այլն: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ուսանողները իրենց վարպետի օգնությամբ տարբեր համայնքներում տեղադրում են արևային կայաններ: «Ոսկերչություն» մասնագիտության ուսանողները պատրաստում են տարբեր զարդեր:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, օրինակ՝ «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» ՄԿԾ-ի շրջանակներում վարպետը և ուսանողները քննարկում և ստեղծում են տարբեր սարքեր՝ երկաթ որոնող, ձայնային ալիքները հեռվից որսացող սարքեր, արևային էներգիայով աշխատող խաղալիք Բուրատինո և այլն: Վերջիններիս արտաքին տեսքի ապահովման մեջ կիրառվում են կենցաղային իրեր՝ թուղթ, մետալոպլաստմասե խողովակ, ալյումինե ձող, դույլի փական և այլն:

Հետազոտական կարողությունների զարգացման նպատակով «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» արտադրական ուսուցման վարպետները հանձնարարում են ուսանողներին ուսումնասիրել տարբեր ժամանակաշրջանների ամենաարդիական սանրվածքները, դրանց կատարման տեխնիկայի վերաբերյալ տվյալներ հավաքագրել և լսարանում մոդելի վրա ստանալ նախընտրելի սանրվածքը: Մեկ այլ հանձնարարություն է ուսումնասիրել գանգուր մազերի յուրահատկությունները, բնական և արհեստական գանգուրների տարբերությունները, խնամքի բարդությունները և այլն, ուսումնասիրել չոր և անփայլ մազերին գեղեցիկ տեսք և փափկություն հաղորդելու հնարավորությունները և այլն: Վարպետները դասապրոցեսի ընթացքում ներկայացնում են ճանաչված վարսահարդարների վիդեոդասերը՝ ցուցադրելով վերջիններիս աշխատանքները:

Փորձագիտական այցից պարզվեց, որ 2020թ. համավարակի ընթացքում դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները դասապրոցեսը կազմակերպել են ոչ միայն տարբեր հարթակներով, այլև ձայնագրել և պատրաստել են տեսադասեր, որոնք կիրառում են նաև համավարակից հետո:

«Համակարգիչների շահագործում» մասնագիտության ուսանողների և մասնագիտական դասախոսների ջանքերով ստեղծվել է ուսումնական ձեռնարկների էլեկտրոնային շտեմարան, որտեղ ներառված են տարբեր մասնագիտությունների վերաբերյալ ուսումնական նյութեր: Էլեկտրոնային շտեմարան մուտք գործելու համար ստեղծվել են QR կոդեր, որոնք փակցված են ուսանողների հանգստի համար նախատեսված սրահում (որը ծառայում է նաև որպես ճաշարան): Դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները որպես ուսումնառության նյութ ուսանողներին տալիս են իրենց մշակումները, որոշ մասնագիտությունների գծով կան նաև մասնագիտական ձեռնարկներ, հանրակրթական առարկաների համար ուսումնարանն ունի դասագրքեր:

Ուսումնարանում որպես այդպիսին գնահատման կարգ առկա չէ: Գնահատումն իրականացվում է 10 բալային համակարգով: Ուսանողները գնահատվում են դասապրոցեսի ընթացքում, յուրաքանչյուր մոդուլի ամփոփումն իրականացվում է ստուգարքի ձևով՝ նախապես հաստատված հարցաշարով: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները , և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Նման մոտեցումը ընդունված է բոլոր մասնագիտություններում: Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել թեստ, առաջադրանք, բանավոր հարցեր և այլն: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և տրվում է գործնական առաջադրանք, կախված առաջադրանքների քանակից, դրանց կատարումից, ճիշտ իրականացված քայլերից ուսանողն ունենում է «անցնում» կամ «չի անցնում» արդյունքը: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են, առկա է կիսամյակային ամփոփիչ հարցաշար:

Ուսումնարանում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն, յուրաքանչյուր դասախոս ինքն է որոշում, թե ինչպես գնահատի ուսանողին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են փոխել իրենց գնահատականը տեղում՝ դասախոսից ստանալով լրացուցիչ առաջադրանք: Գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողներն հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, քննական հարցաշարերում առկա են տեսական հարցեր հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլներից և գործնական առաջադրանքներ: Այցից պարզ դարձավ, որ ուսանողները նախ պատասխանում են տեսական հարցերին, ապա նոր իրականացնում գործնական առաջադրանքը: Առաջադրանքները տրվում են ըստ ուսանողի առաջադիմության, հմտությունների: Բոլոր ՄԿԾ-ների ամփոփիչ ստուգման համար ՄՈՒՀ-ը մշակել է գնահատման հիմնավորումներ, որոնք պարունակում են այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ աշխատատեղի/աշխատասեղանի կազմակերպումը, անվտանգության կանոնների պահպանումը, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանումը, անհատական աշխատանքի քայլ առ քայլ ներկայացումը և այլն:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է ուսանողի կողմից նվազագույնը շեմի ապահովումը, օրինակ՝ վարսահարդարների համար անցողիկ շեմ կհամարվի, եթե ուսանողը քննության ժամանակ պատասխանի բանավոր հարցերին, գործնական աշխատանքի ընթացքում կարողանա լվանալ հաճախորդի մազերը, սանրել և կատարել պարզ հարդարում: Անհրաժեշտ է նշել, որ այս մինիմալ պահանջները որևէ տեղ ամրագրված չեն:

Բացի պետական ամփոփիչ քննություններից ուսանողները հանձնում են քննություններ նաև հանրակրթական երեք առարկաներից՝ հայոց լեզու, պատմություն և մաթեմատիկա: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների արդյունքները այս ուղղություններով բավականին ցածր են, և ուսումնարանը նույնպես մտահոգություն է հայտնում այդ ուղղությամբ: Վերջինս ՄՈՒՀ-ը մեկնաբանում է նրանով, որ աշակերտները Ուսումնարան ընդունվում են գիտելիքների ոչ մեծ պաշարով: Խնդրի լուծման նպատակով ՄՈՒՀ-ն ուսանողների համար կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ, խորհրդատվություններ:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում՝ Ուսումնարանում և գործատուի մոտ: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Որպես այդպիսին պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն:

Ուսումնարանը կրթական ծրագրերի համակարգային բենչմարքինգ մինչ օրս չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Դուալ կրթական ծրագրի ներդրման հետ կապված խոհարար-վարպետները համագործակցել են նույն ժամանակահատվածում դուալ ներդնող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես՝ Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջի հետ: Հիմնական քննարկումները վերաբերել են ուսումնական պլանների կազմմանը: Շարունակական կրթություն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ը «Ոսկերչություն» և «Գեղանկարչություն և քանդակագործություն» ՄԿԾ-ների ծրագրային համեմատություն է իրականացրել Հայաստանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի «Քանդակագործություն» և «Դեկորատիվ արվեստ» կրթական ծրագրերի հետ և կարողացել են իրենց երեք ուսանողի ավարտելուց հետո ուղղորդել բուհ ընդհանուր հիմունքներով:

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման կանոնակարգ ներդրված չէ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ տեղի են ունենում յուրաքանչյուր ուսումնական տարի մեթոդմիավորման նիստերի, մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում իրականացվող նախնական մասնագիտական կրթական ծրագրերը տարածաշրջանում պահանջարկված են: Դրական է ՄՈՒՀ-ի մոտեցումը՝ ունենալու առավել շուկայամետ կրթական ծրագրեր: Այդ նպատակով ուսումնարանն իրականացնում է որոշակի քայլեր ՊԿՉ-ները տեղայնացնելու և տարածաշրջանի կարիքներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Գովելի է, որ նոր մասնագիտությունների ներդրման համար Ուսումնարանը հաշվի է առնում տարածաշրջանի գործատուների առաջարկները և կարողանում է եղած ռեսուրսները (թե՛ նյութական, թե՛ մասնագիտական) օգտագործելով արագ արձագանքել աշխատաշուկայի պահանջին: Փորձագիտական խումբը կարևորում է նաև դուալ համակարգով կրթական ծրագրի ներդրումը, որը նպաստել է տարածաշրջանի խոշոր գործատուների հետ համագործակցության մեծացմանը և խորացմանը: Նման մոտեցումը հնարավորություն է տվել «Խոհարարական գործ» կրթական ծրագրում սովորող ուսանողներին հմտանալ ոչ միայն մեկ խոհանոցի, այլև փոխատեղման արդյունքում ծանոթանալ այլ խոհանոցների հետ, աշակերտել տարբեր շեֆ-խոհարարների մոտ: Դուալ համակարգով ուսումնառության կազմակերպումը ապահովում է նաև ուսանողների և շրջանավարտների արագ աշխատաշուկա ինտեգրմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասավանդման գործընթացում գերակշռում են ինտերակտիվ մեթոդները: Դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները դասավանդման ընթացքում ուսանողներին տրամադրում են անհատական մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում հասնել առավել մեծ արդյունքների, տեսնել ուսանողների նշանակալի առաջընթացը: Ուսանողներին տրվող առաջադրանքները ինքնուրույն են, վերլուծական միտք ձևավորող, երբեմն նաև ստեղծագործական: Գովելի է, որ ուսանողներին տրվող առաջադրանքների կատարման ընթացքում վարպետներն ունեն ուղղորդող դերակատարություն՝ տրամադրելով հետադարձ կապ վերջիններիս իրականացրած աշխատանքների վերաբերյալ, որը նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը:

Դրական է, որ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման համար բացի թղթային տարբերակով ուսումնական նյութերի տրամադրումից ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել մասնագիտական ձեռնարկների թվայնացմանը, ինչպես նաև տեսադասերի պատրաստմանը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին հասանելիություն ունենալ ուսումնառության նյութերին ցանկացած վայրում:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ Ուսումնարանում բանավոր մակարդակում հստակեցված են որոշակի գնահատման մոտեցումներ և չափանիշներ, այնուամենայնիվ դրանք առավել համակարգային և ուսանողների համար առավել թափանցիկ դարձնելու անհրաժեշտություն կա: Կանոնակարգված գնահատման համակարգի, չափանիշների առկայությունը կնպաստի գնահատման համակարգի միասնականացմանը, ինչպես նաև հետագայում հիմք կհանդիսանա գնահատման համակարգի շարունակական բարելավման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը փորձել է որոշ համեմատություններ իրականացնել Գյումրիում գործող մասնագիտական հաստատությունների հետ, այնուամենայնիվ գործընթացները կանոնակարգելու և հստակ մեթոդաբանության ներդրման անհրաժեշտություն է նկատվում, որը կնպաստի թիրախային գործընթացների իրականացմանը և ՄԿԾ-ների բարելավման համար հիմքերի ապահովմանը:

Դրական է, որ կրթական ծրագրերի մշտադիտարկման, բարելավման ուղղությամբ ՄՈՒՀ-ն իրականացնում է քննարկումներ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ մշտադիտարկման գործընթացների կանոնակարգման անհրաժեշտություն կա: ՄՈՒՀ-ը անհրաժեշտություն կունենա մշակելու մշտադիտարկման կանոնակարգ, որտեղ ներկայացված կլինեն մշտադիտարկման գործիքները, ժամկետները, պատասխանատուները և այլն: Համակարգային մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտություն կլինի հավաքագրելու և համադրելու մի շարք տվյալներ, որոնք ցույց կտան կրթական ծրագրի հաջողված լինելը, օրինակ՝ կրթական ծրագրի շրջանակներում աշխատանք գտնող շրջանավարտների քանակը, գործատուների, շրջանավարտների տրամադրած հետադարձ կապը, դասալսումների արդյունքները և այլն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը իրականացնում է իր առաքելությանը համապատասխան և աշխատաշուկայի պահանջները բավարարող կրթական ծրագրեր, ուսանողներին հանձնարարվող առաջադրանքները ինքնուրույն, հետազոտական, ստեղծագործական բնույթի են, դասավանդման ընթացքում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, ունեն գնահատման մեխանիզմներ, որի հիմքում կարևորվում են գործնական հմտությունները, ուսումնառության նյութերի տրամադրման համար ստեղծել են էլեկտրոնային բազա, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնարանը բավարարում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ՄՈՒՀ-ում ընդունելությունն իրականացվում է ըստ լիցենզիայի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի տվյալ ուսումնական տարվա համար հատկացված տեղերի: Յուրաքանչյուր տարվա ընդունելությունից առաջ, ուսանողների հավաքագրման նպատակով ուսումնարանի աշխատակիցները այցելում են տարածաշրջանի հիմնական դպրոցներ՝ արտաքին շահակիցներին ներկայացնելով ուսումնարանում առկա մասնագիտությունների, ուսանողական ընկերությունների, ընձեռնվող հնարավորությունների և հնարավոր առաջընթացի մասին: Ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը տարածում են նաև սոցիարթակներում (facebook, instagram), կազմակերպում են նաև բաց դռների օրեր, որի արդյունքում ապագա ուսանողները ուսումնարանի հնարավորությունները տեսնում են ներսից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներից շատերը ընտրել են Գյումրու թիվ 4 պետական ուսումնարանը՝ հաշվի առնելով վերջինիս հագեցած նյութատեխնիկական բազան: Ուսումնարանում ընդունելությունը կատարվում է dimord.emis.am հարթակի միջոցով: Հարթակում գրանցվելու համար դիմորդներին աջակցում է նաև ուսումնարանի անձնակազմը: Դիմորդների ընդունելությունը իրականացվում է ավարտական փաստաթղթի գնահատականների հիման վրա, մրցութային կարգով: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնարան ընդունվում են հիմնականում հանրակրթական առարկաներից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողները:

2021-2022 ուստարում ուսանողների ընդհանուր թիվը եղել է 268, իսկ 2022-2023 ուստարում՝ 233, դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 35-ով, ուսումնարանը այս փաստը կապում է նախարարության կողմից անվճար ուսուցման տեղերի կրճատման հետ: Ուսանողների մոտ 90%-ը տղաներ են: 2021-2022 ուստարվա ընթացքում ուսումնարանից հեռացվել/ազատվել է 11 ուսանող (հիմնականում երկրից մեկնելու պատճառով), իսկ 2022-2023 ուս. տարում՝ 6-ը:

Ուսանողների կարիքների բացահայտման նպատակով ուսումնարանում գործում է կուրսղեկների ինստիտուտը: Կուրսղեկ կարող են լինել ինչպես դասախոսները, այնպես էլ վարպետները: Վերջիններիս ուսանողները դիմում են ընթացիկ հարցերով: Կուրսղեկներն իրականացնում են նաև ծնողական ժողովներ, որոնց ընթացքում քննարկվում են ուսանողների դաստիարակչական և կրթական հարցերը՝ բացակայությունները, վարքը, ուսման մեջ առաջընթացը և այլն: Ուսանողների կարիքների բացահայտման նպատակով կազմակերպվում են նաև հարցումներ, որը նպատակ ունի գնահատելու վերջիններիս բավարարվածությունը դասախոսական կազմից, ռեսուրսներից: Փորձագիտական այցից և հարցումների վերլուծությունների արդյունքներից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում բավարարված են իրենց տրամադրվող կրթությունից և մնացյալ ծառայություններից:

ՄՈՒՀ-ում ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու համար դասախոսները և վարպետները ուսանողներին տրամադրում են խորհրդատվություններ ինչպես ընթացիկ՝ չպլանավորված (ուսումնառությանը վերաբերող ցանկացած հարցով), այնպես էլ պլանավորված ձևով: Պլանավորված խորհրդատվություններն իրականցվում են մոդուլների ամփոփման և ավարտական քննություններից առաջ: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողներն ունեն նաև հնարավորություն հավելյալ ժամանակ անցկացնելու լաբորատորիաներում/արհեստանոցներում և աշխատել իրենց առաջադրանքների վրա, այդ ժամանակահատվածում վարպետները նույնպես ուսանողների հետ իրականացնում են մենթորական աշխատանք:

Ուսումնարանի շենքում գործում է նաև «Ընտանիք» բարեգործական կազմակերպությունը: Վերջինս կազմակերպում է տարբեր արտալսարանային խմբակներ և ուսումնարանի ուսանողները հնարավորություն ունեն անվճար մասնակցելու գորգագործության, խեցեգործության, հագուստի մոդելավորման և մի շարք այլ դասընթացների: Այս դասընթացներին մասնակցում է ուսումնարանի մոտ 130 ուսանող:

Ուսումնարանում սահմանված չէ վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Ուսանողներն առանց խոչընդոտի կարող են դիմել տնօրենին, ուսումնադաստիարակչական, կազմակերպադաստիարակչական գծով տնօրենի տեղակալներին, դասավանդող անձնակազմին, իրենց վարպետներին, կուրսղեկներին և մնացյալ այլ աշխատակիցներին: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները կաշկանդված չեն և նրանց վերաբերող ցանկացած հարց լուծում է ստանում:

Ուսումնարանում գործում է Կարիերայի կենտրոնը, որն իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային պլանի հիման վրա: Կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվում են ոչ ֆորմալ դասընթացներ, որոնց ժամանակ ուսանողները սովորում են կազմել մրցունակ ինքնակենսագրականներ, ինչպես նաև ձեռք են բերում գործատուին ճիշտ ներկայանալու հմտություններ: Փորձագիտական այցից պարզվեց, որ Կարիերայի կենտրոնի և գործատուների համայնքի հետ կապը թույլ է արտահայտված, վերջինս պայմանավորված է աշխատակցի նոր լինելու հանգամանքով:

Կարիերայի կենտրոնը պարբերաբար անցկացնում է հարցումներ ուսանողների շրջանում: Բացի այդ կենտրոնը նաև ունի շրջանավարտների բազա, որը պարբերաբար թարմացվում է, ամեն տարի վերանայվում է նաև նրանց զբաղվածության վերաբերյալ տվյալները: Ըստ տրամադրած տվյալների՝ 2021-2022թթ. շրջանավարտների 17%-ը ուսումը շարունակում է բուհերում, մասնագիտությամբ աշխատում է 33%-ը, իսկ 33%-ը այլ մասնագիտությամբ, 17%-ը փնտրում է աշխատանք: 2022-2023թթ. շրջանավարտների 9,5 %-ը ուսումը շարունակում են բուհերում, մոտ 26%-ը մեկնել է ծառայության, 8 տոկոսը մեկնել է արտերկիր, 35,5 %-ը աշխատանք է փնտրում, 7%-ն աշխատում է իր մասնագիտությամբ, իսկ 16%-ն էլ՝ այլ մասնագիտությամբ: Մասնագիտությամբ առավելապես շատ կարողանում են աշխատանք գտնել խոհարարները, ռադիոմեխանիկները, համակարգչային օպերատորները: Ոսկերիչները հիմնականում ինքնազբաղ են, իսկ վարսահարդարներից 2018-2023 թթ. տվյալներով իրենց մասնագիտությամբ աշխատում է 5 շրջանավարտ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսումնարանը հնարավորություն է ընձեռում բանակից վերադարձած շրջանավարտներին գալ իրենց վարպետների մոտ վերհիշելու աշխատանքային փորձառությունը:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով ՄՈՒՀ-ը հիմնել և գործարկել է ուսանողական և սոցիալական ընկերություններ: 2020 թ.-ից մինչ օրս ուսումնարանը հիմնել է 5 ուսանողական ընկերություն՝ «Ազգային հուշանվերներ», «էկո տոպրակներ», «Գեղեցիկ վարսեր», «Արևոտ Շիրակ», «Առողջ սերունդ»: Վերջիններս տարբեր բիզնես-նախագծեր են, որոնց ընթացքում ուսանողներն ուսումնասիրում են տարածաշրջանի շուկան, հաշվարկում արտադրվող իրերի ինքնարժեքը, վաճառքի և հաշվապահության գործընթացները: Ընկերությունները միտված են նաև ուսանողների մոտ ձևավորելու ստեղծագործական և հետազոտական կարողություններ, օրինակ՝ «Ազգային հուշանվերներ» ծրագրի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրել են հայկական ազգային, Գյումրուն բնորոշ նախշերը, գունապնակի, վերացող արհեստների վերաբերյալ տեղեկատվություն, վերջիններս հիմք են ծառայել տարբեր զարդերի, փայտե փորագրումների և իրերի պատրաստման համար: Ուսանողները իրենց ստեղծած իրերը նաև վաճառվում են, իսկ հասույթը ներդվում է ուսումնարանի ուսանողների կարիքների բավարարմանը՝ տրանսպորտի ծախսերի, գրքերի ձեռքբերման և այլն:

Ուսումնարանում գործել և գործում է նաև «Առողջ սերունդ» ուսանողական ընկերությունը, անվճար ճաշ է տրամադրում ուսումնարանի ուսանողներին և «Ընտանիք» բարեգործական կենտրոնի սաներին: Ներկայումս ՄՈՒՀ-ում ակտիվ գործում է երկու նման ընկերություն:

Ուսանողների իրավունքներն ամրագրված են ուսումնարանի կանոնադրությամբ, ուսումնարանի և ուսանողի օրինական ներկայացուցչի միջև կնքվող պայմանագրով: Կանոնադրության համաձայն՝ ուսումնարանի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը ուսումնարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: ՈՒԽ կանոնադրությունը հաստատված է ուսումնարանի տնօրենի կողմից, կառույցն իր աշխատանքներն իրականացնում է տնօրենի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանով և հաշվետվություն է ներկայացնում կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՈՒԽ-ի կանոնադրությունում հստակեցված չէ ՈՒԽ նախագահության ընտրության գործընթացը, ինչպես նաև չի սահմանում պահանջներ ՈՒԽ անդամ հանդիսացող ուսանողների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն զբաղվում է միջոցառումների և արտալսարանային կյանքի կազմակերպմամբ, կառույցին ուսանողները հիմնականում չեն դիմում իրենց իրավունքների պաշտպանության հարցերով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ուսանողները ամբողջովին տեղեկացված չեն կառույցի նպատակներից, ինչպես նաև ցածր է վերջիններիս մոտիվացիան կառույցում ընդգրկվելու և գործունեություն ծավալելու ուղղությամբ:

Ուսումնարանում գործում է նաև Ծնողական խորհուրդը, որը ստեղծված է ծնող-ուսումնարան կապի ապահովման, ուսանողների իրավունքների պաշտպանության և ներքին կազմակերպչական հարցեր լուծելու համար:

Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման համար իրականացվում են հարցումներ: Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ ուսանողների 93%-ը տեղյակ է խորհրդատվական ծառայություններից, որից 67%-ն օգտվում են այդ ծառայություններից, իսկ 74%-ը բավարարված է տրամադրվող խորհրդատվություններից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դիմորդների հավաքագրման նպատակով Ուսումնարանը համագործակցում է շրջանի դպրոցների հետ, իրականացվող մասնագիտությունների և ունեցած հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը տարածում է տարբեր հարթակներով: Հաշվի առնելով անվճար տեղերի քանակի կրճատումը՝ ՄՈՒՀ-ը անհրաժեշտություն կունենա բազմազանեցնելու և առավել ակտիվ գործունեություն ծավալելու իր մասին տեղեկատվության տարածումը հասարակության առավել լայն շերտերին ապահովելու համար, վերջինս կնպաստի ՄՈՒՀ-ի մրցունակության ապահովմանը: Իսկ ինչ վերաբերում է ցածր մուտքային տվյալներով ուսանողների Ուսումնարան ընդունվելուն, ապա հաստատությունը դասավանդման գործընթացում կարիք կունենա առավել շատ ընդգծելու հանրակրթական առարկաների գործնական կիրառությունը՝ վերջիններս փոխկապակցելով ուսանողների ընտրած արհեստի/մասնագիտության հետ: Անհրաժեշտ է ուսանողների համար առավել տեսանելի դարձնել, թե ինչպես այս կամ այն հանրակրթական առարկան կարող է բարելավել իրենց հմտությունները և նպաստել կարիերայի աճին, նման մոտեցումը կնպաստի ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և հանրակրթական առարկաներից առաջընթացի ապահովմանը:

Դրական է, որ ուսանողների կարիքների բացահայտման նպատակով գործում են տարբեր կառույցներ, որոնք նպաստում են ուսանողների նկատմամբ անհատական մոտեցման դրսևորմանը: Ուսումնարանի տարածքում գործում է նաև «Ընտանիք» բարեգործական կենտրոնը, որը հավելյալ առավելություն է ընձեռում ուսանողներին՝ օգտվելու բազմազան արտալսարանային դասընթացների հնարավորություններից, վերջինս զարգացնում է ուսանողների ստեղծագործական մտածողությունը և տալիս հավելյալ հմտություններ, որոնք նաև հետագայում կարող են նպաստել ուսանողի մասնագիտական կայացմանը և մրցունակության ապահովմանը:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին կարիերային նպաստող ծառայությունների տրամադրմանը, ապա դրական է, որ ՄՈՒՀ-ն այս ուղղությամբ որոշակի քայլեր է ձեռնարկում, գովելի է նամանավանդ բանակ զորակոչված և վերադարձած շրջանավարտներին մասնագիտական փորձառության վերհիշման հնարավորություն ընձեռելը, այնուամենայնիվ աշխատանքի տեղավորման և մասնագիտական զբաղվածություն ունեցող շրջանավարտների ցուցանիշները դեռևս գոհացուցիչ չեն: ՄՈՒՀ-ը անհրաժեշտություն կունենա իրականացնելու խորքային վերլուծություն, թե որն է մասնագիտությամբ չաշխատելու հիմնական պատճառները, պատճառների լիարժեք բացահայտումը կնպաստի նաև այդ ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից հստակ և պլանավորված քայլերի ձեռարկմանը մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների ցուցանիշները բարձրացնելու ուղղությամբ, վերջինս կնպաստի պետության քաղաքականության՝ շրջանավարտների մինչև 90% զբաղվածության ապահովմանը:

Դրական է ՄՈՒՀ-ում առկա սոցիալական ընկերությունների առկայությունը, որը ուսանողների մոտ ձևավորում է ոչ միայն հետազոտական և ստեղծագործական մտածողություն, այլև նպաստում է ուսանողների ձեռնարկատիրական աշխատանք իրականացնելու կարողության զարգացմանը, որը հետագայում կարող է նպաստել շրջանավարտների ինքնուրույն նախաձեռնությունների և բիզնես գաղափարների իրականացմանը՝ հաշվի առնելով նաև ՄՈՒՀ-ում իրականացվող մասնագիտությունները:

Չնայած նրան, որ ՄՈՒՀ-ում գործում է Ուսանողական խորհուրդ, այնուամենայնիվ վերջինիս աշխատանքներն ակտիվացնելու անհրաժեշտություն է նկատվում, փորձագիտական խումբը գտնում է, որ խուրհուրդը նախ և առաջ կարող է իրականացնել քննարկումներ ուսանողների հետ՝ բացահայտելու վերջինիս կարիքները, ապա իր պլանավորումներն իրականացնել ուսանողների կարիքների հիման վրա՝ առավելագույնս ներգրավելով վերջիններիս այդ միջոցառումներում: Նման մոտեցումը կարող է նպաստել ուսանողական համակազմի ակտիվացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ, վեր են հանվում ուսանողների կրթական կարիքները, ուսանողները հնարավություն ունեն ստանալու խորհրդատվություններ, մասնակցելու ընդհանուր զարգացվածություն ապահովող արտալսարանային դասընթացների, ուսումնարանի վարչական անձնակազմն ակտիվ համագործակցում է ուսանողների հետ վերջիններիս կարիքների բացահայտման և լուծումներ գտնելու գործում, առկա են ուսանողական սոցիալական ընկերություններ, ուսանողներն իրականացնում են բազմաթիվ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ, ձևավորված է ուսանողակենտրոն միջավայր, փորձագիտական խումբը 4-րդ չափանիշը գնահատում է դրական:

Եզրակացություն:Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: ՄՈՒՀ-ը դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների ընտրությունն իրականացնում է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի (2020թ.) և պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան: Մրցույթին մասնակցող թեկնածուներին տրվում են դասավանդման մեթոդներին, ինչպես նաև տվյալ առարկային/մոդուլին վերաբերող մասնագիտական հարցեր: Հարցատոմսը կազմվում է 5 հարցից՝ 3-ը մասնագիտական, 2-ը՝ մեթոդական: 2020 թվականից մինչ օրս մրցութային կարգով աշխատանքի են ընդունվել 3 հանրակրթական առարկաների դասավանդող (անգլերեն լեզու, հայոց լեզու և հայ գրականություն, ֆիզկուլտուրա), 2 արտադրական ուսուցման վարպետ հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», և 1 «Ինֆորմատիկա» առարկայի դասախոս: Մրցույթի արձանագրություններից պարզ դարձավ, որ բոլոր մրցույթներին մասնակցել է մեկ թեկնածու, որը, ըստ ուսումնարանի, պայմանավորված է տարածաշրջանում եղած կադրերի սակավությամբ: Ոլորտային մասնագետներ գտնելու հարցում, ինչպես, օրինակ՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության թեկնածուի դեպքում, Ուսումնարանին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ ուղղորդելով իրենց պրակտիկ մասնագետներին ուսումնարան: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնարանն ունի նաև իր լավագույն շրջանավարտներին աշխատանքի ընդունելու քաղաքականություն, օրինակ՝ «Խոհարարական գործ» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությունների 2 վարպետ:

Ուսումնարանն ունի 39 մասնագետից բաղկացած մանկավարժական անձնակազմ, որից 6-ն աշխատում են համատեղությամբ: Համատեղությամբ աշխատող մասնագետները հանրակրթական առարկաների դասավանդողներն են: Արտադրական ուսուցման վարպետները կամ ինքնազբաղ մասնագետներ են, կամ ունեն մասնագիտական աշխատանքային փորձ (օրինակ՝ ռադիոմեխանիկը, ոսկերիչը, վարսահարդարը պրակտիկ մասնագետներ են):

Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է ոչ մրցութային կարգով՝ հարցազրույցի միջոցով: Կազմի համալրման նպատակով ՄՈՒՀ-ը թափուր հաստիքի վերաբերյալ հայտարարություն է տեղադրում: Նախնական հարցազրույց անցած թեկնածուները անցնում են փորձաշրջան /3 ամիս ժամկետով/: Փորձաշրջանն անցնելու դեպքում նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր անորոշ ժամկետով: Վարչական և ուսումնաօժանդակ կազմը բաղկացած է 19 անձից, որոնցից 4-ն աշխատում են համատեղությամբ:

ՄՈՒՀ-ում դասավանդողներին ներկայացվող հատուկ պահանջներ, ըստ կրթական ծրագրերի, առկա չեն, Ուսումնարաննն առաջնորդվում է ՊԿՉ-ով սահմանված պահանջներով: Դասավանդողներն ունեն պաշտոնի նկարագրեր: 2023թ. դրությամբ ՄՈՒՀ-ում դասավանդող 39 մասնագետներից 15-ը մասնագիտական մոդուլների դասավանդողներ են: Բոլոր դասավանդողների մասնագիտական կրթությունը հիմնականում համապատասխանում է դասավանդվող առականերին/մոդուլներին, բացի 3-ից: Դասախոսներից 1-ն ունի բարձրագույն լեզվաբանական կրթություն, սակայն դասավանդում է համակարգչային գործավարություն, մյուսը ունի բարձրագույն պոլիտեխնիկական կրթություն, սակայն դասավանդում է «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտության մասնագիտական մոդուլները, 3-րդը՝ մասնագիտությամբ ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ է և դասավանդում է «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության մասնագիտական մոդուլները: Անհրաժեշտ է փաստել, որ վերջիններս ունեն երկարամյա մասնագիտական աշխատանքային փորձառություն տվյալ ոլորտում[8]:

Արտադրական ուսուցման վարպետներն ունեն համապատասխան որակավորում, հանդիսանում են ձեռնարկների հեղինակներ (օրինակ՝ հեղինակային ձեռնարկներ ռադիոէլեկտրոնիկայից, խոհարարությունից, փորագրությունից):

[8] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա:

ՄՈՒՀ-ն ունի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև ծնողների հարցման կանոնակարգեր: Դասավանդողների գնահատումը իրականացվում է ուսանողների շրջանում անցկացվող հարցումների տեսքով: Հարցաթերթիկի ձևաչափը կազմում և հարցումն անցկացնում է տնօրենի օգնականը: Հարցումներով գնահատվում է դասավանդողի թեմայի մատուցման, ուսումնառության նյութերի հագեցվածության, լսարանի կառավարան, ուսանողի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի աստիճանը: Դասավանդողի պարբերական գնահատման ձև է նաև դասալսումը: Դասալսումներն անցկացվում են ամեն կիսամյակ, ըստ նախապես սահմանված և հաստատված ժամանակացույցի, դասալսումների արդյունքները արձանագրվում են դասալսումների մատյանում: Դասալսումների արդյունքները քննարկվում են մեթոդմիավորումների նիստերին: Կիրառվում է դասավանդման դրվածքի ստուգում, որի արդյունքները և համապատասխան առաջարկությունները արտացոլվում են դրվածքի հաշվետվություններում: Դասալսումների արձանագրություններում գրանցում են դիտողություններ, ինչպես նաև առաջարկություններ որպես խնդրի հնարավոր լուծում, որոշ դեպքերում փոխադարձ դասալսումների առաջարկությունները շատ ընդհանրական են, օրինակ՝ դասապրոցեսը կազմակերպել այնպես և օգտագործել այնպիսի մեթոդներ, որ բոլոր ուսանողները ներգրավվեն: Ինքնավերլուծության համաձայն՝ ՄՈՒՀ-ը նախատեսում է իրականացնել դասավանդողների ամենամյա գնահատման գործընթաց, որտեղ, բացի ուսանողների հարցման արդյունքներից, կներառվի նաև դասախոսի ամենամյա գնահատման վերաբերյալ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի և մասնագետ գործընկերների կարծիքները:

Ուսումնարանն իր դասավանդողների մասնագիտական աճն ապահովում են ՄԿՈՒԶԱԿ-ի պարբերական վերապատրաստումների միջոցով: Մասնագիտական ներուսումնարանային վերապատրաստումները կազմակերպվում են հանրակրթական դասավանդողների կողմից, օրինակ՝ ZOOM-ի և GOOGLE-ի գործիքակազմի տիրապետման դասընթացներ համավարակի պայմաններում, դասընթացը հեռավար կազմակերպելու նպատակով, անգլերենի առցանց դասերի կազմակերպում դասավանդողների՝ օտար լեզուների իմացությունը բարելավելու նպատակով: Մասնագիտական մոդուլների դասավանդողները, օրինակ՝ վարսահարդարման և խոհարարության մոդուլներ դասավանդողները, սեփական միջոցներով մասնակցում են անհատական վերապատրաստումների, ինչպես նաև մասնակից են լինում մարզ ժամանած մասնագետների վարպետաց դասերին:

Իսկ ինչ վերաբերում է դասավանդող անձնակազմի կայունությանը, ապա անհրաժեշտ է նշել, 2021-2022 ուստարում ներդրված «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության համար հայտարարված մրցույթին թեկնածու չունենալու պատճառով ՄՈՒՀ-ը մի քանի ամիս այդ կրթական ծրագրի դասավանդումը վստահել է ՄՈՒՀ-ի գործատու հանդիսացող «Ֆերտի բարեգործական կենտրոնի» տնօրենին, որը հանդիսանում է ոլորտի մասնագետ, այնուհետև նույն գործատուի ջանքերով Ուսումնարանը կարողացել է ներգրավել պրակտիկ մասնագետի: Կան կրթական ծրագրեր, որոնցում ներգրավված է ընդամենը մեկ վարպետ/մասնագետ, օրինակ՝ «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և այլն:

Դասախոսական կազմի միջին տարիքը 45-ից բարձր է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնարանի մի շարք դասախոսներ աշխատում են նաև «Ընտանիք» ԲՀԿ-ում, որի միջոցով որոշակիորեն լուծվում է դասախոսների կայունության հարցը և կանխվում է հոսունությունը:

ՄՈՒՀ-ում առկա չէ մենթորության սահմանված կարգ: Դասավանդողների միջև գործում է փորձի փոխանակման սկզբունքը, դասավանդողի մոտ անցկացվում են դասալսումներ, դասալսումների արդյունքները քննարկվում են մեթոդմիավորման նիստում, վերհանված հարցերին անդրադառնում են դրվածքների ստուգմամբ: Մեթոդմիավորումը աշխատում է սահմանված կանոնակարգով և հաշվետու է ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալին: ՄՈՒՀ-ը խրախուսում է դասավանդողի ինքնակրթությունը:

ՄՈՒՀ-ում գործում է տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգ: Հրամանների համաձայն, 2021 թվականին խրախուսվել է թվով 64, 2022 թվականին՝ 58, 2023 թվականին՝ 14 աշխատակից:

Իսկ ինչ վերաբերում է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմին ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններն իրականացնելու նպատակով, ապա անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ում բացակայում է որակի ապահովման պատասխանատուի հաստիքը, այդ գործառույթը դրված է կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի վրա, ինչի համար սահմանված է հավելավճար: Բացի հիմնական պարտականություններից, որոշ աշխատակիցներ իրականացնում են այլ գործառույթներ. գործավարը համատեղում է իր պարտականությունները կադրերի բաժնի վարիչի գործառույթի հետ, դաստիարակչական աշխխատանքների գծով տնօրենի տեղակալը ՈԱ պատասխանատուի և այլն: Իր ռազմավարական նպատակների իրականացման համար ՄՈՒՀ-ն ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը դասախոսական կազմի ընտրությունն իրականացնում է մրցութային կարգով, մրցութային հարցաշարերում ներառված հարցերը վերաբերում են ինչպես մասնագիտական կարողություններին, այնպես էլ դասավանդման մեթոդաբանությանը, ընտրված ձևաչափը թույլ է տալիս ընտրելու որակյալ մասնագետների: Մյուս կողմից անհրաժեշտ է նշել, որ դաշտում մասնագետների պակաս կա, որը որոշակի դժվարություններ է ստեղծում կադրերի ընտրության գործում: Գովելի է, որ որոշ դեպքերում ոլորտային մասնագետ գտնելու հարցում ՄՈՒՀ-ին աջակցում է գործատու-գործընկերը, վերջինս նպաստում է որակյալ մասնագետների ներգրավմանը և ուսումնական գործընթացի շարունակականության ապահովմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է եղած դրական փորձը տարածել նաև մյուս կրթական ծրագրերում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ կան կրթական ծրագրեր, որոնք սպասարկում են միայն մեկ վարպետ, վերջինս կարող է վտանգի տակ դնել կրթական ծրագրի շարունակականությունը: ՄՈՒՀ-ն ունի լավագույն շրջանավարտներին աշխատանքի ընդունելու քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, որ այս մոտեցումը առավել տարածելու դեպքում ՄՈՒՀ-ը կկարողանա որոշակիորեն մեղմացնել դասախոսական կազմի կայունության խնդիրը:

Դրական է, որ գործող դասախոսական կազմի մեծ մասի որակավորումը համապատասխանում է դասավանդվող մոդուլներին և առարկաներին, ինչպես նաև դասախոսական կազմի մեծ մասը եղել են կամ գործող մասնագետներ են, վերջինս նպաստում է կրթական գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Դասախոսական կազմի արդյունավետությունը գնահատելու համար ՄՈՒՀ-ը կիրառում է տարբեր մեխանիզմներ, ոնցից մեկը հարցումներն են, այնուամենայնիվ դրանց ամփոփումների մեծ մասը բաժին է ընկնում միայն քանակական տվյալներին, շատ դեպքերում բացակայում են վերլուծությունները, իսկ որակական վերլուծությունների առկայությունը կնպաստեր խնդիրների վերհանմանը և լուծումների առաջադրմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը որոշել է անցկացնել դասավանդողների տարեկան համակարգային գնահատում՝ ներառելով ներքին և արտաքին շահակիցների հարցման արդյունքները: Վերջինս թույլ կտա առավել օբյեկտիվ գնահատելու դասավանդողի աշխատանքը: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ը կարիք կունենա սահմանելու գնահատման չափանիշներ և գնահատման արդյունքներից բխող գործողությունների պլան, նման մոտեցումը կնպաստի դասավանդման որակի բարելավմանը:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը կարևորում է մանկավարժական կազմի մասնագիտական զարգացումը և ինքնակրթությունը: Մասնագիտական մոդուլների դասավանդողների մասնակցությունը մեթոդական և մասնագիտական վերապատրաստումներին (ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ ուսումնարանի ուղղորդմամբ) ապահովում է մասնագիտական աճի շարունակականությունը: Գովելի է, որ, ՄՈՒՀ-ը փորձում է վերհանել դասախոսական կազմի կարիքները և իրականցնում է նաև ներքին վերապատրաստումներ՝ օգտագործելով ունեցած ներքին ռեսուրսները: Փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսական կազմի և վարպետների մասնագիտական վերապատրաստումները, որի պլանավորման և իրականացման համար ՄՈՒՀ-ը կարիք կունենա տրամադրելու նաև որոշակի ֆինանսական միջոցներ: Դասախոսական կազմի կարողությունների շարունակական բարելավումը կապահովի շուկայի կարիքներին համապատասխան կրթության ապահովմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա են դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև գովելի է, որ ղեկավար անձնակազմը նախատեսում է աշխատավարձերի բարձրացում՝ հաշվի առնելով դասավանդողների տարակարգը, վերջինս կնպաստի անձնակազմի մոտիվացիայի, արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև դասախոսական կազմի երիտասարդացմանը:

Հատկանշական է, որ սկսնակ դասավանդողների համար ՄՈՒՀ-ն ապահովում է մեթոդական ուղղորդում, սահմանում է փոխադարձ դասալսումներ, խորհրդատվություններ, ներքին վերապատրաստումներ, այնուամենայնիվ մենթորության գործընթացները հստակ կանոնակարգված չեն: Մենթորության խնդիրների սահմանումը, աշխատանքի պլանավորումը, արդյունքների արձանագրումը կհստակեցնի աշխատանքի ընթացքը և կապահովի շարունակական բարելավում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ հաստիքների համալրման հարցում ուսումնարանը կիրառում է տարբեր պաշտոնների գործառույթների համատեղում ի դեմս մեկ աշխատակցի (օրինակ՝ որակի ապահովման պատասխանատուի գործառույթը կատարում է կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, կադրերի բաժնի վարիչի գործառույթը՝ գործավարը, միջազգային կապերի պատասխանատուի գործառույթը՝ տնօրենի օգնականը), ինչը, թեև գոյացնում է հավելյալ ֆինանսական եկամուտ տվյալ մասնագետի համար, այդուհանդերձ կարող է բերել այն ծանրաբեռնվածության, որը կգործի ի վնաս գործառույթի լիարժեք կատարմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանն ունի համապատասխան որակավորում ունեցող մասնագետի ընտրության կարգ, և հետևաբար անհրաժեշտ մասնագիտական որակներ, պրակտիկ փորձ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, ինչպես նաև երիտասարդ մասնագետներին աջակցելու սկզբունք, դասավանդողների գնահատման համար սահմանված հարցման կանոնակարգ, աշխատակիցների խրախուսման կանոնակարգ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Հետազատական աշխատանքների իրականացումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից չի դիտարկվում: ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը հանդիսանում է մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս, թեև սահմանված չեն նման աշխատանքներ անցկացնելու մեթոդական ցուցումներ, անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ: Առկա է անհատական գործնական աշխատանքների/առաջադրանքների հաստատված ցանկ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում:

Ելնելով «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության առանձնահատկություններից՝ այդ մասնագիտության ուսանողների գործնական-ստեղծագործական առաջադրանքը կայանում է տարբեր տեխնիկական սխեմաների որոնման, վարպետի հետ դրանց քննարկման, այնուհետև պատրաստման մեջ: Աշխատանքները ներառում են ձայնային և լուսային էֆեկտների համադրմամբ տարբեր տեխնիկական սխեմաներով հուշանվերների պատրաստում: Տարեկան առաջադրանքները իրենցից ներկայացնում են անհատական և խմբային գործնական աշխատանքների թեմաներ: Թեմաները քննարկվում են մեթոդմիավորման նիստում, հաստատված ցանկով սահմանվում է տվյալ աշխատանքը կատարող ուսանողի անուն-ազգանունը: Թեմաների ցանկում են երկանիվ գծին հետևող ռոբոտ, ձայնային ուժեղարար, ջրի լիվիտացիա, երգող շատրվան և այլն: Խմբային առաջադրանքների շրջանակներում ուսանողները պատրաստում են սեղանի թվային ժամացույց, անօդաչու թռչող սարք, եկեղեցու մանրակերտ խնկարկության և զանգող մեխանիզմով: Աշխատանքների իրականացման ընթացքում մենթորի դերում հանդես է գալիս վարպետը: Տեխնիկական սխեմաներից բացի ուսանողները սարքերի արտաքին տեսքը ապահովելու համար օգտագործում են կենցաղային իրեր, օրինակ՝ մետաղառուսիչ սարքի պատրաստման համար կիրառել են խողովակ, թուղթ, փրփրաթիթեղ (պենոպլաստ), արևային մարտկոցով քայլող Բուրատինոյի արտաքին տեսքի պատրաստման համար կիրառել են թուղթ, ստվարաթուղթ, բիոֆլոր: Առաջադրանքի կատարման ժամանակ կարևորվում է վերամշակման ենթակա նյութերի, կենցաղում ավելորդ իրերի օգտագործումը: Այսպիսի աշխատանքները շատ են:

«Խոհարարական գործ» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները մշակել են խոհարարական գիրք, որտեղ հավաքագրել են տվյալներ մթերքի տեսակների, պատրաստման, մատուցման ձևերի և այլնի վերաբերյալ: «Խոհարարական գործ» կրթական ծարգրի շրջանակներում 2023-2024 ուսումնական տարվա համար մշակվել է հետազոտական աշխատանքների ցանկ, դրանք իրականացվելու են խմբային եղանակով:

Ուսանողները սահմանված խմբերով ուսումնասիրելու են հայկական, ֆրանսիական և իտալական խոհանոցները, գտնելու են նոր բաղադրատոմսեր հայկական, իտալական և ֆրանսիական խոհանոցներից, ինչպես նաև այդ խոհանոցների համադրությամբ բաղադրատոմսեր: Երկրորդ կուրսի ուսանողներին հանձնարարվել է հետազոտական աշխատանք՝ ուսումնասիրել հայտնի խոհարարների մասնագիտական ուղին: Նման աշխատանքների ներկայացման համար ներկայացման-հանձնման կարգ չի նախատեսված:

«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության ուսանողները ուսումնասիրում են տարբեր դարաշրջանների սանրվածքները՝ փորձելով վերջիններս ստանալ իրենց նոր մոտեցմամբ: Երկրորդ կուրսի ուսանողների հետազոտական աշխատանքը վերաբերվել է վարսավիրության զարգացման փուլերին, ուսանողները ներկայացրել են նախկին և նոր ոճեր՝ ռոկոկո, բարոկկո, մոդերն: Ուսանողները ուսումնասիրում են մազերի տեսակները, վերջիններիս խնամքի տարբերությունները և բարդությունները: «Ոսկերչություն» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնասիրում են տարբեր զարդեր և կատարում անհատական առաջադրանք: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ուսանողները լուծում են մասնագիտական խնդիրներ կայանի տեղադրման դիրքի, սարքավորումների ընտրության, տեղակայման սխալների շտկման և այլնի վերաբերյալ:

Անհատական-գործնական աշխատանքների ներկայացման-հանձման ձևաչափում, ըստ կրթական ծրագրերի, առանձնացված են հարցեր ուսանողների համար, վերջիններս պետք է կարողանան հիմնավորել իրենց աշխատանքը, օրինակ՝ «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողը պետք է հիմնավորի ռադիոդետալների ընտրությունը, ներկայացնի տեխնիկական գծագրի համապատասխանությունը տեխնիկական մատրիցային, բացահայտի սեփական աշխատանքի թերի կողմերը և այլն: Անհրաժեշտ է փաստել, որ սահմանված չափանիշները միտված են ուսանողների վերլուծական, մասնագիտական կարողությունների ձևավորմանը և գնահատմանը:

ՄՈՒՀ-ի 2021-2026 զարգացման ծրագրի ռազմավարական նպատակներից մեկը եղել է ուսանողական ընկերությունների գործունեության խթանումը: Ընկերությունների հիմնադրման նպատակը ի սկզբանե եղել է ուսանողներին տալ հնարավորություն նպատակային կիրառելու մասնագիտական գիտելիքները ու կարողությունները, հետազոտել շուկան, ձևավորել ձեռնարկատիրական հմտություններ, լուծել մասնագիտական գիտելիքների գործնական կիրառման խնդիրը: ՄՈՒՀ-ում ձևավորված է նման 5 ուսանողական ընկերություն, որի շրջանակներում ուսանողները իրականացնում են նաև հետազոտական աշխատանքներ: Այսպես, 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կուրսի «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության ուսանողները, համագործակցելով «Ֆերտի» ԲՀԿ-ի հետ, կատարել են Շիրակի մարզի 4 համայնքների հետազոտություն: Արդյունքում համայնքներում վարպետի ուղղորդմամբ ուսանողները կատարել են 5 արևային կայանների տեղակայման աշխատանքներ: Այս փորձի հիման վրա նույն մասնագիտության վարպետները մասնակցել են «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության չափորոշչի մշակման և փորձարարական կարգով այն ուսումնարանում ներդրման աշխատանքերին: Այս աշխատանքների իրականացման արդյունքում հիմնվել է նաև «Արևոտ Շիրակ» ուսանողական ընկերությունը:

«Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողների ուսանողական ընկերության նախագիծը՝ «Առողջ սերունդ»-ը, լուծել է ՄՈՒՀ-ի ուսանողների և անձնակազմի առողջ սննդի կազմակերպման հարցը: Այս նախագծի շրջանակում ուսանողները հավաքագրել են անհրաժեշտ տվյալներ, կատարել հաշվարկներ:

ՄՈՒՀ-ի դասավանդողների հետազոտական աշխատանքը արտացոլված է իրենց հեղինակային ուսումնական ձեռնարկներում («Ռադիոհեռուստատեսային սարքավորումների վերանորոգման և սպասարկման հմտություններ», «Արդի գեղարվեստական փորագրություն», «Էլեկտրոնային կառավարմամբ կենցաղային սարքերի վերանորոգման և սպասարկման հմտություններ»): Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը մշակել է ձեռնարկ ուսանողական ընկերությունների ներդրման վերաբերյալ, ձեռնարկը հաստատվել է և սպասում է տպագրության: «Խոհարարական գործ» կրթական ծրագրի դասախոսներից մեկը ներգրավված է խոհարարության մասնագիտական ձեռնարկի մշակմանը, վերջինս ևս տպագրման փուլում է և կիրառվում է որպես ուսումնառության նյութ: Խոհարար դասախոսը մշակել է նաև տերմինաբանական բառարան (ռուսերեն), իրականացնում է թարգմանություններ՝ ապահովելով կրթական ծրագրի դասավանդման համար անհրաշժեշտ ժամանակակից ուսումնառության նյութեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի շրջանակում իրականացվող անհատական և խմբային գործնական աշխատանքները, որոնք պարտադիր ներառում են հետազոտական տարր: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը միայն նշում է, որ ՄՈՒՀ-ը կարիք կունենա մշակելու հետազոտական աշխատանքներ իրականացնելու քաղաքականություն, որտեղ կսահմանվի, թե որ աշխատանքներն են ՄՈՒՀ-ում համարվում հետազոտական, ինչպես նաև կամրագրի հետազոտական աշխատանքների պարտադիր լինելու հանգամանքը, այդ ամենը կնպաստի ՄՈՒՀ-ում եղած լավ փորձի պահպանմանը և շարունակական զարգացմանը: Նշանակալի է, որ հետազոտական աշխատանքների թեմատիկան բխում է ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի առանձնահատկություններից: Ուսանողներին տրվող առաջադրանքները, ըստ էության, հետազոտական աշխատանքներ են, քանի որ միտված են ուսանողի վերլուծական մտքի զարգացմանը և ինքնուրույն աշխատելու հմտության ամրապնդմանը: Հատկանշական է, որ որոշ անհատական աշխատանքների կատարման մեջ պարտադիր առկա է էկոմտածողության ձևավորումը՝ թափոնների նվազեցման, իրերին երկրորդ կյանք տալու գաղափարը:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում, որ ուսումնարանը ունի ուսանողական ընկերությունների ներդրման հաջողված փորձ, որը ևս ուսանողի մոտ ձևավորում է հետազոտելու և ձեռնարկատիրական աշխատանք սկսելու կարողություն: Ողջունելի է նաև, որ ընկերությունների հետազոտությունները հիմք են հանդիսացել նաև ՄՈՒՀ-ում նոր կրթական ծրագիր ներդնելու համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ի դասավանդող կազմը իրականացնում է հետազոտական աշխատանք, որի արդյունքում կան հրատարակված մի շարք ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև առկա են հրատարակմանը սպասող նոր աշխատանքեր: Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ը ոչ միայն ձեռնամուխ է լինում ուսումնական ձեռնարկների հրատարակմանը, այլև կարևորում է իր ունեցած լավագույն փորձերի (ուսանողական ընկերությունների), ունեցած հաջողությունների տարածումը, վերջինս կարող է նպաստել այլ ուսումնական հաստատություններում նոր գաղափարների ներդրմանը:

Իսկ ինչ վերաբերում է հետազոտության և կրթական գործընթացների փոխկապակցվածությանը, ապա գովելի է, որ մշակված ձեռնարկները դասավանդողները կիրառում են կրթական ծրագրերի դասավանդման ժամանակ: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի հետազոտական աշխատանքով զբաղվելը կարող է դառնալ դասախոսի աշխատանքի արդյունավետության գնահատման բաղադրիչ: Այս մոտեցումը կնպաստի ոչ միայն Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի, այլ մյուս ՄՈՒՀ-երի նախնական մասնագիտական կրթական ծրագրերի զարգացմանը և ոլորտային գրականության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը հետազոտական աշխատանքները բխեցնում է կրթական ծրագրերի առանձնահատկություններից, կապում է այն պրակտիկ խնդիրների լուծման հետ, դասախոսական կազմն ունի դրական փորձառություն հետազոտական աշխատանք իրականացնելու ուղղությամբ, իրականացված հետազոտությունները կիրառվում են կրթական գործընթացներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՌԾ-ում որպես ուսումնարանի զարգացման գերակա ուղղություն առանձնացրել է շուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագիտական կրթության ապահովումն ու սովորողների համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Նշված նպատակի իրականացման համար ուսումնարանը օգտագործում է «Ընտանիք» ԲՀԿ-ի կողմից անհատույց օգտագործման պայմանագրով հատկացված 6022,18 ք.մ. տարածքը, որից ուսումնարանի մասնաշենքի ընդհանուր մակերեսը կազմում է 2643.78 ք.մ., վերջինս ներառում է նկուղային տարածքը և ևս երկու հարկ: Մասնաշենքի վերջին հիմնանորոգումն իրականացվել է 2023 թվականին[9]: Մասնաշենքում առկա են 13 լսարան, 1 լաբորատորիա (որն օգտագործվում է ֆիզիկա և քիմիա առարկաների համար), 2 համակարգչային լսարան, 6 արհեստանոց (փայտամշակման, ոսկերչական, վերականգնվող էներգիայի, ռադիոէլեկտրոնիկայի, վարսավիրական գեղեցկության սրահ և սոցիալական ձեռներեցության), ուսումնական խոհանոց, ճաշասրահ, սպորտ դահլիճ, գրադարան (մասնագիտական գրադարանը գտնվում է պահեստում, իսկ գեղարվեստական գրքերի հատվածը համակարգչային լսրանում), ընթերցասրահ, բազմագործառույթ դահլիճ, լսարաններ, ցուցասրահ, պահեստ (պահեստում գործում է նաև արխիվը), հանդերձարան, մարզահրապարակ և այլն, որոնք ունեն համապատասխան կահավորում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արհեստանոցները վերջին տարիների ընթացքում զգալի համալրվել են տեխնիկական միջոցներով և սարքավորումներով: Ուսումնարանի խոհանոցը օգտագործվում է «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորողների գործնական աշխատանքների, նաև «Առողջ սերունդ» ուսանողական ընկերության գործունեության համար: 2021 թվականից ուսումնարանում պարբերաբար գործել է նաև «Անվճար սնունդ» ծրագիրը, ինչի արդյունքում ուսանողները հնարավորություն են ստացել անվճար օգտվել ճաշասրահում մատուցվող սննդից:

Ուսումնարանն ապահովված է ինտերնետով, ներքին ցանցով և Wi-Fi կապով, առկա է 4 պրոյեկտոր, որոնցից 2-ը ամրակցված են, իսկ 2-ը՝ շարժական:

[9] Նախադասությունը խմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական միջավայրի բարելավման նպատակով նախատեսված է իրականացնել մասնաշենքի արտաքին սալիկապատում և ջերմամեկուսացում՝ միաժամանակ իրականացնելով էներգաարդյունավետության և էներգախնայողության ծրագրեր Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվող զարգացման ծրագրերին մասնակցելու միջոցով:

ՄՈՒՀ-ի 2021-2026 զարգացման ծրագրի 3-րդ նպատակով սահմանված է եղել 644քմ տարածքի հիմնանորոգում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023թ. ավարտի դրությամբ Ուսումնարանում հիմնանորոգվել է ընդհանուր 844 քմ տարածք:

ՄՈՒՀ-ի շենքում առկա է թեքահարթակ, վերելակ, խոհանոցի սպասարկման վերելակ, իսկ խոհանոցի սարքավորումների գերակշիռ մասը աշխատում են էլեկտրական էներգիայով:

Ուսումնարանում ուսանողներին առաջին բուժօգնությունը ցուցաբերվում է վարչական աշխատակիցների համար նախատեսված սենյակում, քանի որ բուժկետի համար տարածք առանձնացված չէ, միևնույն ժամանակ արհեստանոցներում առկա են բուժօգնության արկղեր: Մինչև 2022թ. ուսումնարանը չի ունեցել առանձնացված մարզադահլիճ, օգտագործել է հանդիսությունների դահլիճը, որն ըստ անհրաժեշտության, կահավորվել է որպես մարզադահլիճ կամ նիստերի դահլիճ: 2022թ. հիմնանորոգվել է նոր մարզադահլիճի տարածքը, ստեղծվել է հանդերձարան, ԿԳՄՄՆ-ի կողմից համալրվել է սպորտային գույքով: Սակայն որոշ մարզաձևեր հնարավոր չէ անցկացնել մարզադահլիճում՝ առաստաղի ցածր լինելու պատճառով: Հանդիսությունների դահլիճը կահավորված է շարժական վարագույրով և ջեռուցման համակարգով: ՄՈՒՀ-ն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, տաք և սառը ջրամատակարարումով: Ուսումնարանի այգում գործում է արևային էլեկտրակայան, որը գտնվում է ուսումնարանի բակում կառուցված զրուցարանի տանիքին՝ նշված արտադրող կայանի կառուցման աշխատանքներին մասնակցել են նաև Ուսումնարանի ուսանողները:

Ուսումնարանում առկա է գրադարան, որը համալրված է շուրջ 5000 գրքով՝ նշված գրականության գերակշիռ մասը կազմում է գեղարվեստական գրականությունը, ինչպես նաև առկա են մասնագիտական գրականության թվայնացված ռեսուրսներ: Մասնագիտական գրականության հասնելության հղումները (QR կոդ) տեղադրված են ուսանողներին հասնելի վայրում:

Ուսումնարանը յուրաքանչյուր տարվա վերջում նախապես կազմում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը ներկայացվում է կառավարման խորհրդի հաստատմանը, որից հետո ներկայացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատմանը:

Դիտարկելով ուսումնարանի ներկայացրած նախահաշիվները կարող ենք նկատել, որ Ուսումնարանի ֆինանսական մուտքերը հիմնականում ձևավորվել են սուբսիդիաների հաշվին, իսկ ելքային մասը հիմանականում կազմել են աշխատանքի վարձատրության, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման, սոցիալական նպաստների մասով, ոչ ֆինանսական ակտիվների և հիմնական միջոցների մասով ծախսերը: 2022 թվականի ընթացքում Ուսումնարանի բյուջեի կառուցվածքում տեղի են ունեցել փոփոխություններ, մասնավորապես՝ բյուջեի շուրջ 35% կազմել են պաշտոնական դրամաշնորհները, ինչի արդյունքում Ուսումնարանի մոտ ձևավորվել է հավելուրդ, որը Ուսումնարանը 2023 թվականի ընթացքում օգտագործել է հիմնական միջոցների (գույքի) ձեռք բերման նպատակով: Ուսումնարանի կողմից տարբեր դրամաշնորհային ծրագրերի մասնակցության արդյունքում ստեղծվել է ժամանակակից նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածությամբ արհեստանոցներ և լսարաններ:Ինչ վերաբերում է մնացյալ ծախսերին՝ ընդհանուր ֆինանսական միջոցների 54%-ը բաժին է ընկնում աշխատավարձին, 5%-ը՝ ծառայությունների մատուցմանը(կոմունալ ծառայություններ, ուսումնաօժանդակ ծառայություններ):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսումնարանի վարպետները հաշվի առնելով մասնագիտական մոդուլների պահանջները յուրաքանչյուր տարի կազմում և ներկայացնում են նյութական և տեխնիկական նոր ռեսուրսների ձեռքբերման պահանջագրեր, որոնք ֆինանսական պլանավորման գործընթացում ներառվում են ուսումնարանի ֆինանսատնտեսական գործունեության նախագծում:

Փորձագիտական այցի շրջանակում տարբեր ներքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքում պարզվեց նաև, որ Ուսումնարանը մասնագիտական արհեստանոցների տեխնիկական հագեցվածությունից զատ ապահովում է նաև ուսանողների գործնական աշխատանքների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մթերքներ, մետաղ, փայտ և այլն), որոնց վերաբերյալ պահանջագրերը նույնպես ներկայացվում են վարպետների կողմից: Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է հետևյալ կերպ. վարպետների և դասախոսների կողմից ներկայացված պահանջագրերը համաձայնեցվում են մեթոդմիավորման նախագահների և փոխտնօրենների հետ ուսումնարանի առաջնահերթությունների հիման վրա, կատարվելիք ընդհանուր ծախսերի և կանխատեսվող եկամուտների համաձայն կազմվում է ֆինանսատնտեսական նախահաշվի նախագիծ, որը քննարկվում է Կառավարաման խորհրդում և հաստատումից հետո ներկայացվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատմանը:

Ուսումնարանի մասնագիտական գրադարանի և արխիվի աշխատանքները կազմակերպվում են մեկ պահեստային մասում, Գեղարվեստական գրադարանը գործում է համակարգչային լսարաններից մեկում, Քիմիա և Ֆիզիկա առարկաների լաբորատորիաների նյութատեխնիկական ռեսուրսները գտնվում է ՆԶՊ առարկայի մասնագիտական լսարանում առանձնացված պահեստում:

Ուսումնարանի փաստաթղթաշրջանառության գործընթացն հիմնականում իրականացվում է գործավարի կողմից, որն իրականացնում է փաստաթղթերի գրանցումը, ընդունումը (հաշվառումը) և համապատասխան ստորաբաժանումներին փոխանցման (էլեկտրոնային և թղթային տարբերակներով) ապահովումը և այլ գործառույթներ:

Ուսումնարանում ներդրված է կառավարման և փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը, միևնույն ժամանակ Ուսումնարանի ներքին փաստաթղթաշրջանառության նպատակով մշակվել և վարվում է թղթային գրանցամատյան, գործում է նաև միջստորաբաժանումային կապի ապահովման՝ փաստաթղթաշրջանառության ներքին ցանց: Ուսումնարանի կողմից նախատեսվում է ստեղծել պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներ աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով:

Ուսումնարանի ներքին իրավական ակտերը՝ կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր, ծրագրեր և այլ փաստաթղթեր տեղադրված են պաշտոնական կայքէջում:

Ուսումնարանի ռազմավարական նպատակներից ու խնդիրներից է անհրաժեշտ միջավայրի ստեղծումն ու ապահովումը: ՄՈՒՀ-ի կողմից կարևորվում է ներքին շահակիցների առողջության ու անվտանգության պահպանմանն ուղղված միջոցառումները, որոնց իրականացման համար հատկացնում է համապատասխան ֆինանսական, նյութական ու մարդկային ռեսուրսներ:

Ուսումնարանում սովորում են թվով 25 տարբեր առողջական խնդիրներ ունեցող ուսանողներ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսումնարանի դասախոսները և վարպետները նշված ուսանողներին դասավանդելիս կիրառում են անհատական մոտեցում, իսկ ՄՈՒՀ-ի շենքը և արհեստանոցները հնարավորինս հարմարեցված են նշված ուսանողների պահանջներին:

Ուսումնարանի բոլոր հարկերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան-սխեմաներ և կրակմարիչներ: Հաստատության շենքն ունի անհրաժեշտ թվով մուտքեր՝ ուսանողների և աշխատակիցների տարհանումն արդյունավետ կազմակերպելու համար:

Ուսումնարանը ունի բուժքույր, սակայն բուժկետի համար առանձնացված չէ համապատասխան տարածք: Հաշվի առնելով, որ արհեստանոցների գերակշիռ մասը գտնվում են կիսանկուղային հարկում, ուսումնարանը ձեռք է բերել օդաքարշ սարքեր:

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ են շրջանավարտների, դասավանդողների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, քննարկումները, որոնք իրականացվում են ՈՆԱ պատասխանատուի գործառույթները իրականացնող փոխտնօրենի և տնօրենի օգնականի կողմից: Կարիքների բացահայտման և բավարարվածության վերաբերյալ հարցումների վերլուծությունների հիման վրա ներկայացվում են առաջարկություններ, որոնք կյանքի են կոչվում համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ առաջարկություն են ներկայացրել արհեստանոցներում նյութատեխնիկական բազայի համալրման վերաբերյալ, որին տրվել է համապատասխան լուծում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները հնարավորություն ունեն մոդուլներով նախատեսված գործնական աշխատանքներից զատ օգտվել արհեստանոցներից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը: Ուսումնարանում առկա լսարանային ֆոնդը, լաբորատորիաները, մարզադահլիճը, սպորտդահլիճը լավ վիճակում են և ունեն պատշաճ կահավորում՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացումը: Գովելի է, որ ուսումնարանի ռեսուրսատար մասնագիտությունների դասասենյակ-արհեստանոցներն ու լաբորատորիաները տեխնիկապես հագեցած են, ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով և ռեսուրսներով: Ղեկավար կազմի այն մոտեցումը՝ դիմելու դրամաշնորհային ծրագրերի և ձեռնարկելու արտաբյուջետային միջոցներ, էականորեն նպաստել է ռեսուրսային բազայի և ուսումնական միջավայրի բարելավմանը, որը նպաստում է ՄՈՒՀ-ի մրցակցային առավելության բարձրացմանը տարածաշրջանում:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ ՄՈՒՀ-ի ներկայիս հիմնական առաջնահերթություններից կարող է դիտարկվել հանրակրթական առարկաների՝ քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաների ստեղծումը և համալրումը, վերջիններիս առկայությունը կնպաստի բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ ուսանողների հետաքրքրվածության ապահովմանը, որն էլ իր հերթին կնպաստի մասնագիտությունների համար կարևոր հիմնային գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը՝ նպաստելով շրջանավարտների բազմաֆունկցիոնալությանը: Այդ լաբորատորիաները հետագայում կարող են հիմք հանդիսանալ երկրի առաջնահերթություններից բխող նոր կրթական ծրագրեր ներդնելու համար:

Գովելի է, որ գործնական աշխատանքներ կատարելու համար ուսանողներին անհրաժեշտ ընթացիկ ուսումնական նյութերն ամբողջությամբ տրամադրվում է ուսումնարանի կողմից, որը նպաստում է ուսանողի գործնական կարողությունների և սահմանված վերջնարդյունքների ապահովմանը:

Դրական է ՄՈՒՀ-ի համագործակցությունն «Ընտանիք» ԲՀԿ-ի հետ, եղած մոտեցումը թույլ է տալիս երկու կառույցների համատեղ ջանքերով բարելավել և զարգացնել ռեսուրսային բազան՝ ապահովելով նպաստավոր ուսանողական միջավայր:

Ուսումնարանում փաստաթղթաշրջանառության կառավարման համար ներդրվել է Mulberry համակարգը, ներդրված է փաստաթղթաշրջանառության համակարգը: Անվտանգության ապահովման տեսանկյունից փորձագիտական խումբը դրականորեն ամփոփում է, որ Ուսումնարանն ուսանողների և դասախոսների համար ապահովել է անվտանգ միջավայր, միևնույն ժամանակ ապահոված են նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար համապատասխան պայմաններ: Ուսումնարանում նյութական ռեսուրսների տրամադրումը իրականացվում է դասախոսների և վարպետների կողմից ներկայացած զեկուցագրերի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում ռեսուրսային համալրումն իրականացնել ներքին շահակիցների կարիքներից ելնելով:

Դրական է, որ ռեսուրսային բազայի արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել են հարցումներ, որոնց արդյունքները վերլուծվել են, նախանշվել են որոշ առաջարկներ, կարծիքներ, նման մոտեցումը կնպաստի ռեսուրսային բազայի թիրախային համալրմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը, ՄԿԾ-ների իրականացման համար ձևավորված է ուսումնական միջավայր, զուգահեռաբար՝ Ուսումնարանի գործունեությունն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, ուսանողները, վարպետներն ու դասախոսները բավարարված են տրամադրվող ուսումնական ռեսուրսների օգտակարությունից և հասանելիությունից, Ուսումնարանն ապահովում է ուսանողների և դասախոսների անվտանգությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնարանը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7- ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Ուսումնարանն ունի որոշակիորեն ձևավորված հաշվետվողականության ներքին և արտաքին համակարգ: Որպես արտաքին հաշվետվողականություն՝ Ուսումնարանի տնօրենը ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ընդունվող ուսանողների թվաքանակի, դասախոսական կազմի և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ: ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է հաշվետվություն մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Հաշվետվություններ ներկայացվում են նաև ՊԵԿ, վիճակագրական կոմիտե և այլ պետական գերատեսչություններ: Ուսումնարանը յուրաքանչյուր տարի հրապարակում է տարեկան տեղեկագիր, որում ներկայացված են Ուսումնարանի կողմից իրականացված միջոցառումների և դասընթացների վերաբերյալ տեղեկություն:

Որպես ներքին հաշվետվողականություն՝ Ուսումնարանի յուրաքանչյուր ստորաբաժանում, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակից տարվա սկզբին կատարում է պլանավորում, իսկ ավարտին ներկայացնում է հաշվետվություն, որոնք հիմնականում վերաբերում են կարճաժամկետ պլանավորմանը: Ստորաբաժանումների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա էլ ձևավորվում է տնօրենի տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվում է ԿԽ-ին:

Փորձագիտական խումբը ինքնավերլուծության, ներկայացված փաստաթղթերի և հանդիպումների ընթացքում արձանագրեց, որ ՌԾ-ի հետ համահնչությունը պահպանելով՝ ստորաբաժանումները ներկայացնում են տարեկան հաշվետվություններ: Վարպետները, դասախոսական կազմը ինչպես նաև ուսումնաօժանդակ կազմը պարբերաբար քննարկում են ունենում տնօրենի հետ՝ ներկայացնելով առկա ձեռքբերումներն ու հնարավոր զարգացման ուղիները: Տնօրենի տարեկան հաշվետվությունները փաստահենք են/(ընդունելության տվյալներ, վերապատրաստում անցած դասախոսների և վարպետների տվյալներ և այլն):

Ուսումնարանում ներդրված է ներքին գնահատման համակարգ, յուրաքանչյուր տարի իրականացնում են ներքին գնահատում, որը իրենից ներկայացնում է Ուսումնարանի կրթական գործընթացների, նյութատեխնիկական ռեսուրսների, ուսանողների թվաքանակի, շենքային պայմանների և այլ ցուցանիշների վերլուծություն:

Ուսումնարանն ունի պաշտոնական և ՈւԽ ֆեյսբուքյան էջեր, որոնք կառավարվում են համապատասխանաբար «Համակարգչային օպերատորություն» մասնագիտության վարպետի և ուսանողական խորհրդի պատասխանատուների կողմից: Էջում հասանելի են որոշ ընթացակարգեր ընդունելության մասին, ինչպես նաև որոշ տեղեկատվություն ուսումնարանի գործունեության մասին՝ բաց դռների օր, միջոցառումներ, սեմինարներ, ուսանողների կողմից կատարված աշխատանքներ: Անհրաժեշտ է փաստել, որ ֆեյսբուքյան էջին հղվող հարցերին ՄՈՒՀ-ն արագ է արձագանքում: Ինքնավերլուծությամբ ներկայացված տվյալներից և պատասխանատուների հետ հանդիպումներից կարելի է նկատել, որ Ուսումնարանը հետևում է էջի հետևորդների քանակին և կայքի ու էջերի այցելուների տվյալներին՝ ըստ ՀՀ մարզերի:

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը մտադիր է թարմացնել ուսումնարանի պաշտոնական կայքէջը՝ օգտվողներին տրամադրելով տեղեկատվության ստացման առավել մեծ հնարավորություններ: Իրականացվում են նյութերի հավաքագրման աշխատանքներ կայքէջը համալրելու նպատակով:

Ուսումնարանի հետ հնարավոր է հետադարձ կապ հաստատել Սփյուռ տեղեկատույում, պաշտոնական կայքէջում տեղադրված հետադարձ կապի տվյալներով՝ հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե և ֆեյսբուքյան էջով: Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ն արագ է արձագանքում իրեն հղվող հարցերին: Ուսումնարանի կրթական ծրագրերի, վարձավճարների չափի մասին հնարավոր է տեղեկատվություն ստանալ կայքէջից և ֆեյսուքյան էջից: Ուսումնարանի կայքէջը եռալեզու է, իսկ հաստատության տեսանելի վայրում տեղադրված են ուսանողներին և ուսումնական գործընթացին վերաբերվող տեղեկություններ:

ՄՈՒՀ-ը նաև հետադարձ կապ է պահպանում իր շրջանավարտների, ուսանողների ծնողների և գործատուների հետ: Շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմներ են հարցումները, կապը վարպետների հետ, իսկ ծնողների և գործատուների հետ իրականացվում են հարցումներ և քննարկումներ:

Իսկ ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի կողմից հասարակությանը փոխանցվող արժեքներին, ապա անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ն իր Ուսանողական ընկերությունների ձևավորման հաջող փորձառությամբ փորձում է կիսվել հանրակրթական դպրոցների հետ՝ նպաստելով դպրոցներում աշակերտական ընկերությունների ձևավորմանը (Սարատակ և Ջրաձոր համայնքների դպրոցներում)։ ՄՈՒՀ-ը «Ընտանիք» ԲՀԿ-ի հետ կազմակերպել և իրականացրել է «Ամառային դպրոց» ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են գործարարության, փորձի փոխանակման, «Կանաչ տեխնոլոգիաների» կիրառման, անվտանգության և առաջին օգնության վերաբերյալ(միջազգային Կարմիր Խաչի կողմից)տարաբնույթ դասընթացներ դպրոցների և ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչների համար։ Ուսումնարանը կազմակերպում է նաև կարճաժամկետ դասընթացներ աշխատանք փնտրողների («Խոհարարական գործ» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Ոսկերչություն») համար։ ՄՈՒՀ-ը նաև հնարավորություն է ընձեռում իր՝ բանակ զորակոչված և վերադարձած շրջանավարտներին անվճար հիմունքներով օգտվել Ուսումնարանի մասնագիտական արհեստանոցներից (տրամադրելով նաև աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր) և ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն վարպետներից՝ մասնագիտական գիտելիքները վերհիշելու և կարողությունները զարգացնելու նպատակով։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ուսումնարանում ներդրված է հաշվետվողականության համակարգ, առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ՝ նպաստելով Ուսումնարանի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը։

Դրական է, որ Ուսումնարանի կայքէջում տեղադրված են գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, քաղաքականությունները, հաշվետվությունները, ինչպես նաև կայքէջն առավել գրավիչ դարձնելու նպատակով ՄՈՒՀ-ը նախատեսում է կայքի թարմացում, որը կնպաստի ՄՈՒՀ-ի թափանցիկության բարձրացմանը։

Դրական է, որ Ուսումնարանում գործում են հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմներ, որոնք նպաստում են շահակիցների հետ կապի ամրապնդմանը։ Գովելի է, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել իր ունեցած լավ փորձի՝ Ուսանողական ընկերությունների, տարածմանը նաև հանրակրթական դպրոցներում, որը կնպաստի աշակերտական հանրույթի շրջանում ձեռնարկատիրական կարողությունների ձևավորմանը։ Ողջունելի է նաև ՄՈՒՀ-ի նախաձեռնողականությունը կարճաժամկետ դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որը նպաստում է տարածաշրջանում եղած մասնագետների մասնագիտական կարողությունների շարունակական զարգաումանը և տարածաշրջանի աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջների բավարարմանը։ Գովելի են ՄՈՒՀ-ի ջանքերը նաև բանակ զորակոչված և վերադարձած շրջանավարտների համար անվճար դասընթացների կազմակերպման ուղղությամբ, որը կնպաստի վերջիններիս արագ ինտեգրմանն աշխատաշուկա։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում գործում է հաշվետվողականության հստակ համակարգ, առկա են հարթակներ ուսումնարանի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, գործարկվում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, իրականացվում են հասարակությանը գիտելիքների փոխանցման ծրագրեր, փորձագիտական խումբը գտնում է, որ Ուսումնարանը համապատասխանում է Չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Ուսումնարանն իր 2021-2026թթ. ՌԾ-ում որպես 6-րդ նպատակ սահմանել է՝ ուսումնական գործընթացը առավել նպատակային կազմակերպելու, աշխատաշուկան որակյալ և պահանջված շրջանավարտներով համալրելու համար բավարարել արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, ընդլայնել համագործակցության շրջանակը: Նպատակին հասնելու համար որպես խնդիր դիտարկվել է սերտ համագործակցության ապահովումը տեղական և միջազգային կրթական, հասարակական, գործատու կազմակերպությունների, մարզային և քաղաքային իշխանությունների հետ:Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ ՄՈՒՀ-ում իրականացնում են տնօրենը, տնօրենի օգնականը, կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և Կարիերայի պատասխանատուն: Ուսումնարանը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 30 տեղական գործընկերների հետ: ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է պրակտիկաների գործընթացը, «Խորհարարական գործ» դուալ կրթական ծրագիրը, այս ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ-ն ունի ամենաշատ գործընկերներ՝ 11 գործատու:

Ուսումնարանի ամենախոշոր գործատու-գործընկերներից են Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոնը, «Ֆերտի» բարեգործական կենտրոն ՀԿ-ն, «ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ-ն, «Սոլարա» ՍՊԸ-ն և այլն։ Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ն իր գործընկերների հետ համագործակցության արդյունքում որոշակիորեն կարողանում է լրացնել նաև դասախոսական կազմի կայունության խնդիրը՝ գործընկերների միջոցով պրակտիկ մասնագետների ներգրավման տեսքով, օրինակ՝ «Ֆերտի» բարեգործական կենտրոնի մասնագետը ներգրավվել է Ուսումնարանի աշխատանքներում՝ որպես «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» ՄԿԾ-ի հիմնական դասախոս։ Բացի այդ, գործընկերոջ աջակցությամբ ՄՈՒՀ-ն ուսանողների համար կարողանում է ապահովել գործնական միջավայր. ուսանողներն իրենց դասախոսի ուղղորդմամբ իրենց գործնական դասերն իրականացնում են իրական միջավայրում՝ տեղադրելով ջրատաքացուցիչներ և պանելային վահանակներ։ Ուսումնական հաստատությունն ակտիվորեն համագործակցում է «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության հետ, վերջինս Ուսումնարանի հետ գործում է նույն շենքում։ «Ընտանիք» ԲՀԿ-ի հետ համատեղ ջանքերով Ուսումնարանն իրականցնում է ռեսուրսային բազայի բարելավումներ, ապահովում է դասախոսական կազմի կայունությունը (դասախոսական կազմի մի մասն աշխատում են և՛ ուսումնարանում, և՛ «Ընտանիք» ԲՀԿ-ում), իրականացնում է մի շարք համատեղ միջոցառումներ։ ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձառություն նաև միջազգայնացման գործընթացում։ «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)-համագործակցություն Հարավային Կովկասում» գերմանական ծրագրի շրջանակներում հաստատությունը համագործակցում է Գերմանիայի Մեկլենբուրգ–Ֆորպոմերանիա Դաշնային տարածաշրջանային էկոնոմիկայի ուսումնական կենտրոնի և Գերմանիայի «Բիզնես և կրթություն գործընկերություն» կազմակերպության և հայկական «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի հետ։ Ծրագրի շրջանակներում Ուսումնարանի տնօրենը Գերմանիայում մասնակցել է վերապատրաստումների, որի հիման վրա հաստատությունում ներդրվել են «Ուսանողական ընկերությունները»։ Ծրագրի շրջանակներում ձևավորվել և գործում են 5 ուսանողական ընկերություններ, որտեղ կամավորության հիմունքներով անդամագրվել են մոտ 32 ուսանող։

ՄՈՒՀ-ն ունի համագործակցություն ֆրասիական «Œuvre d'Orient» կազմակերպության հետ, որի շրջանակներում իրականացվել է «Անվճար սննդի տրամադրում» ծրագիրը, վերջինս ուղղված է եղել սոցիալապես անապահով ուսանողների, ինչպես նաև տեղահանված արցախցիների սննդի ապահովմանը։

2022թ.-ից ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ։ Հաստատությունը համագործակցության առաջարկներ է ստացել Հունաստանի, Ֆրանսիայի, Իսպանիայի ուսումնական հաստատություններից, և փորձագիտական այցի ընթացքում ՄՈՒՀ-ը մշակում էր 2024-2027թթ. կարողությունների զարգացման համատեղ ծրագրեր։ Այս ծրագրերը համակարգվում են տնօրենի օգնականի և կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի կողմից՝ տնօրենի աջակցությամբ և վերահսկողությամբ։

ՄՈՒՀ-ն իր արտաքին կապերի և միջազգայնացման մեկ այլ մեխանիզմ է դիտարկում ուսանողների մասնակցությունը և հաղթակաները տարբեր միջազգային մրցույթներում, ինչպես նաև ուսանողների մասնակցությունը տարբեր միջազգային կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Անհրաժեշտ է փաստել, որ տարբեր տարիներին ՄՈՒՀ-ի ուսանողները մասնակցել և մասնակցում են Հայաստանում և արտերկրում տարբեր մրցույթների և ունենում ձեռքբերումներ: Անհրաժեշտ է նշել, որ Ուսումնարանը խրախուսում է ուսանողների մասնակցությունը տարբեր միջոցառումներին: Այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ուսանողները մասնակցել են Յունիսեֆ ընկերության, Էյ-թի-փի, Սիվիտաս, Բիզնես կրթություն և գործընկերություն հիմնադրամների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված դասընթացներին և մրցույթներին:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների 20,6%-ը, վարչական աշխատակիցների՝ 66,7 %, ուսանողների 19,2- 44,2 % տիրապետում են օտար լեզուների (ռուսերեն կամ անգլերեն): Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով վերջիններիս համար ներքին վերապատրաստումներ: Նման դասընթացներ նախատեսվում են նաև ուսանողների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները որպես հաստատության շարունակական բարելավման հիմնաքար: Գովելի է, որ Ուսումնարանն ունի տեղական գործընկերների մեծ ընդգրկվածություն, որը նպաստում է ուսանողների պրակտիկ կրթության կազմակերպմանը և գործատուներին ուսումնական գործընթացում ներգրավմանը: Գովելի է նամանավանդ Ուսումնարանի ունեցած փորձառությունը գործընկերոջ միջոցով դասախոսական կազմի բացը որակյալ մասնագետներով լրացնելու ուղղությամբ(«Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» ՄԿԾ-ում) , փորձագիտական խումբը խրախուսում է այս դրական փորձառությունը տարածել նաև մյուս ՄԿԾ-ներում, վերջինս կնպաստի ՄՈՒՀ-գործատու միասնական կրթական ծրագրի իրականացմանը, աշխատաշուկա-ՄԿՈՒ հաստատություն կապի ամրապնդմանը և պահանջված կադրերի պատրաստմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձառություն միջազգային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ, Ուսումնարանն արդեն իսկ հաջողել է ուսանողական ընկերությունների կայացման հարցում, վերջինս հիմքեր է ստեղծում նաև այլ ծրագրերում ներգրավվելու համար: Փորձագիտական խմբի համար գովելի է, որ ՄՈՒՀ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկում նաև «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ, որը կարող է նպաստել կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացմանը, ուսանողների և դասախոսների համար շարժունության հնարավորությունների ստեղծմանը, համատեղ այլ ծրագրերի իրականացմանը: Այս գործընթացները մեծ հնարավորություններ կստեղծեն նաև լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավման տեսանկյունից: Դրական է, որ միջազգայանցման ուղղված աշխատանքներն իրականացվում են կանոնակարգված և առկա է պատասխանատվության հստակ շրջանակ:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի ջանքերը դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացությունը բարելավելու ուղղությամբ, այս տեսանկյունից փորձագիտական խումբը նշում է, որ յուրաքանչյուր վերապատրաստման փուլից մեկ այլ փուլ անցնելը կարևոր է գնահատել ձեռք բերված առաջընթացը՝ հասկանալու վերապատրաստման արդյունավետությունը և հետագա ծրագիրը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանն ունի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության լայն շրջանակ, որը նպաստում է կրթական ծրագրերի անխափան իրականացմանը, ՄՈՒՀ-ն ունի միջազգային ծրագրերի մասնակցության դրական փորձառություն, գործուն քայլեր է իրականացնում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղութամբ, ջանքեր է գործադրում ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների զարգացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Ըստ ՄՈՒՀ-ի կանոնադրության և ռազմավարական ծրագրի՝ Ուսումնարանի առաջնային նպատակներից է կրթության որակի ապահովումը: 2023թ. մայիսի 5-ին Ուսումնարանը հաստատել է Որակի ապահովման հայեցակարգը, որտեղ ներկայացված են որակի ապահովման սկզբունքները, գործընթացի նպատակներն ու խնդիրները, քաղաքականությունը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս փաստաթուղթը մշակվել է՝ պայմանավորված ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքով, վերջինս դեռևս իր լիարժեք կիրառությունը չի գտել Ուսումնարանում: Փաստաթղթի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն իր մեջ պարունակում է ընդհանրական տեղեկատվություն և լիարժեք հարմարեցված չէ Ուսումնարանի կարիքներին, օրինակ՝ անդրադարձ է արված որակի արտաքին գնահատման մեխանիզմներին, սակայն առկա չէ տեղեկատվություն որակի ներքին գնահատման մեխանիզմների վերաբերյալ, տարանջատված չեն շահակիցների դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում և այլն:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ն իր գործունեության արդյունավետության գնահատման կարևոր մեխանիզմ է դիտարկում տարեկան ներքին գնահատումները: Վերջիններս իրականացվում են 2020 թվականից: Այդ մոդելը Ուսումնարանը վերցրել է հանրակրթությունից և համապատասխանեցրել ՄԿՈՒ ոլորտին: Գնահատումն իրականացնելու նպատակով Ուսումնարանը մշակել և ներդրել է (2020թ.) «Գործունեության ներքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգը»: Յուրաքանչյուր տարի տնօրենի հրամանով ձևավորվում է ներքին գնահատման հանձնախումբ, որը մասնակցում է ներքին գնահատման աշխատանքներին: Գնահատումն անդրադառնում է ՄՈՒՀ-ի կառավարման, տնտեսական, ուսումնական հարցերին, տալիս է ուսումնական տարվա անփոփ նկարագիր, ներքին գնահատման վերջում իրականացվում է SWOT վերլուծություն: Ներքին գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում նոր գործընթացների իրականացմանը, օրինակ՝ արձանագրելով պետական քննությունների միջին միավորի նվազումը, առաջարկվել է առավել ուշադիր լինել քննական առարկաների դասավանդման գործընթացին, հանրակրթական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը խթանելու նպատակով առաջարկվել է կազմակերպել դասախոսություններ, զրույցներ:

Ուսումնարանում ներդրված չէ որակի ապահովման հաստիքը, ըստ ղեկավարության, վերջինս պայմանավորված է ՄՈՒՀ-ի ոչ բավարար ֆինանսական միջոցներով և պետության կողմից ներկայացված հաստիքացուցակում այդ հաստիքի ոչ պարտադիր լինելու հանգամանքով: Որակի ապահովման պատասխանատուի աշխատանքները լրավճարային հիմունքներով կատարում է կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջինիս վրա դրվել է այդ պարտականությունը՝ որպես Ուսումնարանի գործունեությանը քաջատեղյակ աշխատակցի՝ ով կհամակարգեր ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքները:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ է դառնում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է ՈԱ պատասխանատուի հիմնական հաստիքի առկայությունը: ՄՈՒՀ-ը շեշտադրում է ընթացիկ տվյալների համակարգային հավաքագրման և վերլուծման անհրաժեշտությունը:

Որակի ապահովման պատասխանատուի գործառույթները, պարտականությունները սահմանված չեն, առկա չէ ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլան:

Որակի ապահովման նպատակով 2021 թվականից ՄՈՒՀ-ը սկսել է իրականացնել հարցումներ ուսանողների, գործատուների, ծնողների և շրջանավարտների շրջանում:

2021 թվականից առաջ հարցումները անցկացվել են բանավոր եղանակով, այնուհետև՝ առցանց (google forms) և վերջում՝ գրավոր (այս եղանակը ՄՈՒՀ-ը դիտարկում է որպես առավել արդյունավետ, թեև փաստում է այս տարբերակի արդյունքների ամփոփման աշխատատարությունը): Մշակվել են հարցման ձևաթղթեր, «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ծնողների հարցման» կանոնակարգ, «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման» կանոնակարգ, «Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն և հայեցակարգ»: Նշված կարգերի և հարցման ձևաթղթերի կազմման պարտականությունը ստանձնել է տնօրենի օգնականը:

Հարցումները ներառում են նաև հարցվողների կողմից տրված լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկներ հատվածը, որտեղ շահակիցները կարող են ներկայացնել իրենց կարծքիները, օրինակ՝ գործատուները նշում են, որ անհրաժեշտություն կա խորացնելու ուսանողների օտար լեզուների իմացությունը, ուսանողները նշել են դասավանդման արդյունավետության համար պաստառների, ցուցադրման համար տեսացրիչի անհրաժեշտությունը և այլն: Անհրաժեշտ է նշել, որ վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը ձեռնարկում է քայլեր, օրինակ՝ ուսանողների օտար լեզվի իմացության բարձրացման նպատակով պլանավորվում են արտալսարանային պարապմունքներ: Հարցումների ամփոփումն իրականացնում է կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը տնօրենի օգնականի օժանդակությամբ: Հարցումների վերլուծությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ ընտրված հարցման ձևը առավելապես թույլ է տալիս ստանալ քանակական տվյալներ, իսկ որակական վերլուծությունները սակավ են:

Որակի ապահովման որոշակի գործընթացներ իրականացվում են նաև ստորաբաժանումներում՝ ամբիոններում, ուսումնական մասում և Կարիերայի կենտրոնում: Ամբիոնները և ուսումնական մասը հետևում են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը, ուսանողների առաջընթացին, հավաքագրում են որոշակի տվյաներ ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ դասալսումների, գործատուների հետ հաղորդակցման արդյունքում:

Որակի ապահովման գործընթացները դեռևս ներդրման փուլում են, ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացրել համակարգի գնահատում և բարելավման գործընթացներ տեղի չեն ունեցել:

Որակի ապահովման գործընթացները, դեռևս լինելով ներդրման փուլում, վերջին մեկ տարվա ընթացքում կենտրոնացվել են ինքնավերլուծության իրականացման և որոշ կանոնակարգերի մշակման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին գնահատումներում ՄՈՒՀ-ը հավաքագրել է ամենամյա տեղեկատվություն, տվյալներ, որոնք օգնել են ինքնավերուծությանը և փորձագիտական խմբի համար ապահովել անհրաժեշտ հիմք:

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացների թափանցիկությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ այս ուղղությամբ աշխատանքները դեռևս տեսանելի չեն, ՄՈՒՀ-ն ունի կայքէջ, որտեղ առկա չէ ՈԱ համակարգի համար նախատեսված բաժին, իսկ ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացված հարցումների վերլուծությունները կամ ներքին գնահատմանը վերաբերող տեղեկությունը չի հրապարակվում:

Դատողություններ: Փորձագիտական խուբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում որակի ապահովման գործընթացները ներդնելու և կանոնակարգված աշխատանք իրականացնելու նպատակով մշակվել են մի շարք փաստաթղթեր, այնուամենայնիվ վերջիններս դեռևս լիարժեք կիրառելու և արդյունավետությունը գնահատելու անհրաժեշտություն ունեն, որը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին ունենալու կիրառական և իր առանձնահատկություններին բնորոշ փաստաթղթային հենք:

Որակի ապահովման պատասխանատուի աշխատանքները ներկայումս կատարվում են կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից, վերջինիս բեռնվածությունը կարող է խոչընդոտել թե՛ հիմնական պարտականությունների լիարժեք կատարմանը, թե՛ որակի ապահովման համակարգի լիարժեք ներդրմանը, բացի այդ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՈԱ պատասխանատուի գործառույթների համադրումը այլ վարչական պաշտոնների հետ կարող է առաջացնել շահերի բախում աշխատանքի արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև որակի ապահովման պատասխանատուի գործառույթների և պարտականությունների շրջանակը սահմանող պաշտոնի նկարագրի առկայությունը, վերջինիս առկայությունը կհամակարգի և հստակ կընդգծի ՈԱ պատասխանատուի դերակատարությունը Ուսումնարանում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է ՈԱ պատասխանատուի դերակատարությունը կրթական ծրագրերի համակարգային մշտադիտարկման, տվյալների հավաքագրման, ՄՈՒՀ-ում տրամադրվող այլ ծառայությունների արդյունավետության գնահատման գործընթացներում: ՈԱ համակարգի համակարգային և լիարժեք գործարկումը կնպաստի տվյալահենք որոշումների կայացմանը և ՄՈՒՀ-ի շարունակական բարելավմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներում որոշակիորեն ներդրված են որակի ապահովման մեխանիզմներ, հավաքագրում են որոշակի տվյալներ, որոնք հետագայում հիմք են հանդիսանում կրթական ծրագրերի վերանայման և բարելավման համար, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ այս գործընթացները դեռևս առավել համակարգային դարձնելու, կանոնակարգելու անհրաժեշտություն ունեն, որը կնպաստի ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ՈԱ գործընթացների թափանցիկությունը, խումբը հույս է հայտնում, որ կայքէջի բարելավման և ՈԱ աշխատանքների առավել համակարգային դառնալու արդյունքում, ՄՈՒՀ-ը կհրապարակի վերլուծություններ և տվյալներ իր գործունեության արդյունավետության վերաբերյալ:

Եզրահանգում: Հաշվի առնել, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում ՈԱ համակարգը դեռևս ներդրման փուլում է, առկա չէ ՈԱ պատասխանատուի հիմնական հաստիք և գործառույթների սահմանում, ՈԱ գործընթացները հստակ չեն պլանավորվում, տարանջատված չեն ներքին և արտաքին շահակիցների դերակատարությունը ՈԱ գործընթացներում, առկա չէ ՈԱ գործընթացների թափանցիկությունը երաշխավորող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունները չեն բավարարում Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Քրիստինե Հակոբյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23.02.2024

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քրիստինե Հակոբյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի «Տուրիզմի հիմունքներ», «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում» 5-ամսյա հեռահար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», իսկ 2020 թվականին՝ «Զբոսաշրջություն(ըստ ճյուղերի)» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներին: Մի շարք մասնագիտական ձեռնարկների հեղինակ է:Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և Տուրիզմի դասախոս:

Ելենա Մարտիրոսյան՝ 2002 թվականին ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի Ռուսաց լ. և գրակ., անգլ.լ. ֆակուլտետը: 2015-2017 թվականներին եղել է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ռուսաց լեզվի դասավանդող: 2017 թվականից առ այսօր աշխատում է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում՝ որպես տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ:

Խաչիկ Շահբազյան՝ 2020 թվականից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերության «Էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը» մասնագիտության ասպիրանտ է: 2022 թվականից առ այսօր աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Ինժեներական տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում՝ որպես Տեխնոլոգիաների կառավարման ամբիոնի դասախոս: Հեղինակ և համահեղինակ է թվով 25 գիտական հոդվածների, 3 ուսումնական ձեռնարկի և 1 մեթոդական ցուցումների:

Արամ Հակոբյան՝ 2022 թվականից սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	13.11.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսումնարան տնօրենի հետ	11:00	12:00	60 րոպե
2.	Հանդիպում ուսումնարանի փոխտնօրենների հետ	12:10	13:10	60 րոպե
	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	14:30	15:10	40 րոպե
5.	Հանդիպում ուսումնարանի շրջանավարտների հետ	15:20	16:10	50 րոպե
6.	Հանդիպում ուսումնարանի կառավարման խորհրդի անդամներ հետ	16:20	17:10	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	17:20	18:10	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:20	18:30	10 րոպե

	14.11.2023թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում մեթոդիմավորման նախագահների և ուսումնական մասի վարիչի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Դասալսումներ	10:40	11:40	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	11:50	13:00	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:20	15:10	50 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (հաշվապահ, գնումների համակարգող, կարիերայի կենտրոնի ղեկավար, դուալ կրթական ծրագրի ղեկավար, գրադարանավար, կադրերի բաժնի վարիչ)	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում դասախոսական կազմի և վարպետների ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	16:30	17:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	17:40	19:00	80 րոպե

	15.11.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Խոհարական գործ» և «Ռադիոէլեկտրոնիկայի միջոցների տեխնիկական սպասարկում» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Խոհարական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ռադիոէլեկտրոնիկայի միջոցների տեխնիկական սպասարկում» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Խոհարական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ռադիոէլեկտրոնիկայի միջոցների տեխնիկական սպասարկում» կրթական ծրագրի ուսանողների հետ	11:40	12:30	50 րոպե
4.	Դասալսումներ			12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
6.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			14:40	15:20	40 րոպե
7.	Հանդիպում ծնողական խորհրդի ներկայացուցիչների հետ			15:30	16:00	30 րոպե
8.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			16:10	16:40	30 րոպե
9.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:50	19:00	120 րոպե

	16.11.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:20	40 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:30	13:00	90 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	16:30	140 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	16:40	17:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ-ի ընթացիկ գնահատման վերլուծություններ	1
2.	ՌԾ առաջնահերթությունները սահմանելիս ներքին և արտաքին շահակիցների հետ քննարկումների արձանագրություններ, վերլուծություններ, հարցման թերթիկներ	1
3.	Տարիֆիկացիա 2023թ.	2
4.	Նախահաշիվ 2023թ.	2
5.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ /վերջին 2 տարվա/	2
6.	Առաջադրված և «Վերականգնվող էներգիայի կայանների մոնտաժում» կրթական ծրագրերի ամբողջական փաթեթներ	3
7.	«Գեղանկարչություն և քանդակագործություն» կրթական ծրագրի ներդրման համար տարածաշրջանային շուկայի վերլուծություն	3
8.	ՄԿԾ-ների արդյունավետության ընթացիկ գնահատման հիմքեր	3
9.	Ամփոփիչ ատեստավորման հարցաշարեր, ընթացիկ առաջադրանքներ	3
10.	Դասացուցակ, ժամանակացույց	3
11.	Քովիդի ժամանակահատվածում իրականացված տեսադասերի հղումներ / բացի ռադիոէլեկտրիկայից /	3
12.	ՈւԽ արձանագրություններ	3
13.	Բաղադրատոմսերի պարտադիր ցանկ, որն օգտագործվում է ուսումնարանում	3
14.	Պրակտիկաների լրացված օրագրեր, յուրաքանչյուր կուրսից 3 հատ /բացի դուալից/	3
15.	Պետական քննությունների հաշվետվություններ որտեղ առկա են հստակ առաջարկություններ	3
16.	Ուսանողներին տրվող ուսումնառության նյութեր	3
17.	Դուալ կրթության արդյունավետության գնահատման վերլուծություն	3
18.	2023-2024 ուստարվա ուսանողների քանակ	4
19.	Վերջին 5 տարվա շրջանավարտների բազա	4
20.	ԿԱՊԿՈՒ ուսանողների անվանացանկ՝ ըստ կուրսերի, ՄԿԾ-ների և առողջական խնդիրների	4
21.	Գնահատականի վերահանձնման կարգը	4
22.	ՈւԽ աշխատանքային պլաններ, հաշվետվություններ, նիստերի արձանագրություններ/վերջին 3 տարվա/	4
23.	Ուսանողների հեղինակած առդիո և վիդեո աշխատանքեր	4
24.	«Գաղափարից բիզնես» սոցիալական ձեռնարկություն ծրագրի շրջանակներում ուսանողների կողմից մշակված բիզնես պլաններ	4
25.	Ներուսումնարանային վերապատրաստումների ժամանակացույց, թեմաներ, վերապատրաստողներ	5

26.	Այցի օրվա դրությամբ աշխատակիցների թիվը առանձնացված՝ հիմնական, համատեղություն, վարչական, ուսումնաօժանդակ	5
27.	Դասախոսների մրցույթների արձանագրություններ և հարցաշարեր	5
28.	Պարգևատրված դասախոսների քանակը վերջին երեք տարում	5
29.	Հետազոտական աշխատանքներ 2 թեմայով՝ 2-րդ կուրսի համար ճանաչված խոհարարների մասնագիտական ուղին /4 աշխատանքային թիմ/ և 3-րդ կուրսի համար աշխարհի խոհանոցներ /3 աշխատանքային թիմ/	6
30.	ձեռնարկների հեղինակների ցանկ	6
31.	Ուսանողների կողմից իրականացվող այլ հետազոտական և վերլուծական աշխատանքներ	6
32.	Վերջին տարիներին քոլեջի միջոցներով գնված զույքացուցակ	7
33.	Վերջին 3 տարիներին իրականացված կարճաժամկետ կրթական ծրագրերի ցանկ, ժամանակացույց և մասնակիցների քանակ	7
34.	Erasmus + ծրագրին ներկայացվող դրամաշնորհային փաթեթեների draft տարբերակներ	9
35.	2022-2023 ուստարվա ներքին գնահատում	10
36.	Ուսանողների, շրջանավարտների, գործատուների, ծնողների շրջանում իրականացվող հարցումների հարցաթերթեր և վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Լաբորատորիաներ
3. Արհեստանոցներ,
4. Ճաշարան,
5. Ամբիոններ,
6. Սանհանգույցներ,
7. Դահլիճ

ԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԲՀԿ-Բարեգործական հասարակական կազմակերպություն
2. ԿԳՄՄՆ-Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3. ԿԽ-Կառավարման խորհուրդ
4. ՄԿԾ-Մասնագիտական կրթական ծրագիր
5. ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
6. ՄԿՈՒԶԱԿ-Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
7. ՄՈՒՀ-Մասնագիտական ուսումնական հաստատություն
8. ՈԱ-Որակի ապահովում
9. ՈԱԱԿ-Որակի ապահովման ազգային կենտրոն
10. ՊԵԿ-Պետական եկամուտների կոմիտե
11. ՊԻԳԲ- Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
12. ՌԾ-Ռազմավարական ծրագիր
13. ՍՊԸ-Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
14. ՈՒԽ-Ուսանողական ընկերություն